№ 155 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՅՈՒԼԻՍԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՅՈՒԼԻՍԻ № 155

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 6 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Թեմական դպրանոցի
համար հարկաւոր են
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ռուսաց լեզուի և գրականութեան	22 դաս
Լատիներէնի	12 դաս
Ընդհանուր և ռուսաց պատմութեան	12 դաս

◆ ԴԱՍԱԳԻՆՆ Է 60 ՌՈՒԲԼԻ ◆

Դիմել դպրանոցի տեսչին մինչև օգոստոսի 15-ը։ Ռոճիկը պիտի ստանայ պաշտօն մտնելու օրից։
Տեսուչ՝ Ն. ՇԱՀԱԶԻԶ
(հ.) առ. 650. 6—6

ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ „ИНТЕЛЛИГЕНТНЫЯ"
ЦѢНА 25шт. 15к. 10ш. 6к. 100ш. 60к.
(հ. հ. կ.) առ. 662. 100—15

ПАПИРОСЫ
ЛЕВЪ 20шт. 5коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15шт. 6коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
(հ. հ. կ.) առ.

ԿԱՐՍԻ հայոց ծխական երկսեռ երկդասեան դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
18 դասի և աւագութեան համար 1000—1500 ռուբ. ռոճիկ։ Ցանկալի է, որ աւագ ուսուցիչը լինի ռուսագէտ։ Խնդիրների հետ պէտք է ներկայացնել աւարտման վկայականը և կամ նրա պատճէնը։ Խնդիրների ընդունելութիւնը մինչև օգոստոսի 1-ը։
Դիմել հոգաբարձութեան։
(ա. օ.) առ. 719. 6—6

„ДЕШЕВО"
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ №7.
(հ. հ. կ.) առ. 283. 50—44

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւնների
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօշուբէևսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(հ. հ. կ.) առ. 243. 100—45

ՎՏԱՆԳՎԱԾ ՏԵՂԵՐՈՒՄ

«Մշակի» երէկվայ համարում տըպված տեղեկութիւնները Ղարադաղի թշուառութիւնների մասին ցոյց են տալիս, որ իսկապէս չափազանց ողբալի վիճակի մէջ է հայ գիւղերի դրութիւնը։

Գիւղացիները կորուստներ ունեն՝ թէ իրանց վրա յարձակվողներից և թէ իրանց պաշտպաններից։ Առաջինները խլում են անասուններ և տանում կահկարասիք, երկրորդները պահանջում են ծանր ծախքեր և վարձատրութիւն իրանց պաշտպանութեան համար։

Բայց և այնպէս պէտք է գոհունակ լինել, որ գոնէ այդ պաշտպանութիւնն էլ կայ, որովհետև առանց նրան դրութիւնը բոլորովին յուսահատական կը լինէր։

Մենք մեր յօդուածներից մէկում յիշատակել էինք, որ գիւղական արտերը մնում են առանց խնամքի և հսկողութեան շատ տեղերում և ընդգծել էինք այդ դժբաղդութեան լուրջ նշանակութիւնը։ Այսօր նոր գանգատների հիման վրա դարձեալ արձանագրելով նոյն երևոյթը, մենք կրկին ուշադրութիւն ենք հրաւիրում նրա կարևորութեան վրա։ Ղարադաղի գիւղացիութեան յուսահատ վիճակը ստիպում է, որ բոլոր այն անձերը և հիմնարկութիւնները, որոնք որևէ հնարաւորութիւն ունեն ազդել իրերի դրութեան վրա, շտապեն այդ անելու մանաւանդ այժմ, երբ գիւղացիութեան կեանքի ամենակրիտիկական շրջանը պահանջում է հողագործից անդուլ աշխատանք իր հողի վրա։

Երբ գիւղացին չը կարողանայ ներկայ շաբաթներում կանոնաւոր առաջ տանել իր տնտեսութիւնը, հնար չունենայ ժամանակին ջրել և խնամել իր անդաստանները, քաղել խոտը, հնձել հացահատիկները և նրանց ամբարել համապատասխան ծածկոյթներում, այն ժամանակ նա կը կորցնի իր ապրուստի միջոցները, և յետոյ նոյնիսկ ամենաապահով կերպով վերականգնած խաղաղութիւնը անկարող կը լինի վերադարձնել գիւղացուն այն, ինչ որ նա արդէն կորցրել է, մինչդեռ այժմ ստանալով աջակցութիւն և պաշտպանութիւն, նա ազատ կը մնայ տնտեսական վնասներից, գոնէ մի որոշ չափով։

Մենք մասնաւոր հեռագիրներ ունենք Թ. Թումանեանից, որ ռուսահպատակների պաշտպանութեան վրա դարձված է ուշադրութիւն մեր կառավարութեան կողմից։ Այդ մասին կը հաղորդենք, երբ կը ստանանք աւելի մանրամասն տեղեկութիւններ։

Կարևոր է, որ Ատրպատականի պարսկական իշխանութիւնն էլ իր կողմից վճռական միջոցների դիմէ և զսպէ այն վայրագութիւնները, որ անպատիժ կերպով գործում են տեղական կալուածատէրերն և անհանգիստ տարրերը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
19 յուլիսի

Բուդապեշտ.—Յուլիսի 17-ին կայացաւ «ընդհանուր ընտրողական իրաւունքի» լիգայի գումարած միտինգը։ Բանաձև ընդունվեց, որով կառավարութեանը առաջարկվում է հերթից վերցնել զինւորական օրինագծերը և ձեռնարկել ընտրողական օրէնքի նախագծի քննութեան։ Յետոյ տեղի ունեցաւ հսկայական ցոյց։ Ոստիկանութիւնը սրերը մերկացրեց։ Շատ ցուցարարներ վիրաւորված են և կալանաւորված։

Բիլբաօ.—Համերգի ժամանակ ընդհարում եղաւ նացիօնալիստների և և սօցիալիստների միջև. երբ երաժշտախումբը նուագում էր Բասկի հիմնը, սօցիալիստները երգեցին «Ինտերնացիօնալը»։ Միջամտեց ոստիկանութիւնը, որ հարկադրվեց զէնքի դիմել։ Բազմաթիւ վիրաւորներ և կալանաւորվածներ կան։

Լիվէրպուլ.—Անապատային տարածութիւնները և անտառները հրդեհի մէջ են, որն արդէն ոչնչացրել է ընդարձակ տեղեր։ Հրդեհը հանգցնելու համար աշխատում են երեք գնդեր և հրդեհաշէջների խմբեր։

Բէլգրադ.—Եկան գահաժառանգ Ալէքսանդրը և Թագուհին։

Լիսաբօն.—Հիմնադիր ժողովը 78 ձայնով մերժեց սահմանադրութեան նախագծի այն յօդուածը, որ ընդունում է գործադուլների և լօկաուտների իրաւունքը։

Լօնդօն.—Թէմզայի վրա չեն աշխատում 4000 նաւահանգստային բանւորներ և 1500 բեռնակիրներ։ Բանւորները պահանջում են, որպէսզի գործատէրերը կատարեն իրանց խոստումները։

Էլօրօ (Մեկսիկա).—Գործադուլ բանւորները փորձեցին բռնութեամբ ազատել բանտարկեալներին. զօրքերը կրակ բացին և սպանեցին 9, վիրաւորեցին 32 հոգու։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
19 յուլիսի

Կ. Պօլիս.—Մինիստրների խորհուրդը վճռեց, որ Ցետինյէում պաշտօնավարող դեսպանը վերջին անգամ կառաջարկէ մալիսօրներին ընդունել Բ. Դրան պայմանները. մերժման դէպքում դեսպանը կառաջարկէ Չեռնոգորիային զինաթափ անել մալիսօրներին։ Բ. Դուռը յոյս ունի խաղաղ վախճանի վրա։ Անաջողութեան դէպքում վճռված է Աբդիւլլահ-փաշային գործողութիւնների ազատութիւն տալ։

Ցետինյէ.—Բ. Դուռը ընդունեց այն պայմանները, որ մշակել էր Թիւրքաց դեսպանը չեռնոգորական կառավարութեան համաձայնութեամբ։ Յուլիսի 20-ին Թիւրքաց դեսպանը Զուկանովիչի և գեներալներ Մարտինովիչի ու Վուկօտիչի հետ միասին մեկնում է Պօդգօրից՝ հաղորդելու մալիսօրներին օսմանեան կառավարութեան վճիռը։

Վիեննա.—«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսէն» տըպել է ալբանական հարցի առիթով չեռնոգօրական Թագաւորի հետ տեղի ունեցած մի խօսակցութիւն։ Նիկօլայ Թագաւորի կարծիքով՝ Թիւրքական քաղաքականութիւնը Ալբանիայում սխալ էր։ Դրութիւնը սուր կերպարանք առաւ այն պատճառով, որ Թիւրքերը չը կատարեցին ալբանների հետ կապած համաձայնութիւնները։ Թագաւորը մատնանշել է, թէ կատարվող բանակցութիւնները չեն կարող աջողութեամբ վերջանալ, և ընդգծել է, որ Չեռնոգորիան զէնքի կը դիմէ միմիայն ամենածայրայեղ դէպքում։ Մինչև օրս դրանում անհրաժեշտութիւն չէր ներկայանում, թէև Չեռնոգորիան վնասվում է ալբանական խառնակութիւններից. ալբան ապստամբների պահպանութիւնը արդէն արժեց Չեռնոգորիային 4 միլիօն. առևտուրը կանգ է առել, երկիրը խոշոր վնասներ է կրում։ Առ այժմ Չեռնոգորիան իրաւունք է տալիս գործը հասցնել շուտափոյթ վախճանի։ Եթէ այդ յոյսը ի դերև ելնէ, այն ժամանակ Չեռնոգորիան ինքը կը լուծէ հանգոյցը։ Թագաւորը հերքեց մօբիլիզացիայի տեղեկութիւնները։ Վերջում Նիկօլայը խիստ գանգատվում է ոտքերի հիւանդութիւնից և աւելացնում է, որ հրաժարվեց Պետերբուրգ գնալուց նաև ծագած քաղաքական բարդութիւնների պատճառով. երբ վերջինները վերանան, Թագաւորը կը ձեռնարկէ ճանապարհորդութեան, յետոյ Պետերբուրգից կը մեկնէ Վիեննա։

Քննելով ալբանական հարցը, «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսէն» ընդգծում է, որ պահանջ կայ խաղաղութեան, որովհետև ալբանները կարող չեն դիմադրել Թիւրքական ոյժերին. մեծ պետութիւնների միջամտութիւնը անհնար բան է։ Իր հերթին Թիւրքիան լիակատար հիմք ունի արդարացի քննութեան ենթարկել ալբանների պահանջները, հակառակ դէպքում նրան սպառնում է պատերազմ Չեռնոգորիայի հետ։

«Րէյխս-Պօստը» հաղորդում է, որ խորհրդակցութիւնը Պօդգօրիցայում համաձայնութեան եկաւ։ Բ. Դուռը սկըզբունքով ընդունել է ալբանների պահանջները. տեղի են ունենում վերջնական բանակցութիւններ առանձին բայրակդարների հետ. կանցնէ դարձեալ մի քանի օր մինչև պաշտօնապէս հաշտութիւն կայացնելը։

«Ցէյտը» Թիւրքական վճիռը ընդդէմ ալբան փախստականների անուանում է ծանր սպառնալիք չեռնօգօրցիների և ալբանների հասցէին։ Թիւրքիան սպասում է, որպէսզի հակառակորդները, տեսնելով որ յոյս չը կայ Եւրոպայից, ցոյց տան հնազանդութիւն։

Ուսկիւբ.—Շատ չեռնօգօրցիներ մալիսօրների հետ, անցնելով սահմանը, յարձակվեցին Թիւրքաց զօրքերի վրա։ Յարձակումը յետ է մղված։

Եանինայից տեղեկացնում են, որ դըրութիւնը չափազանց վատ է։ Ապստամբների հրոսակախմբերը հասել են 3000 մարդու։ Առևտուրն ու երթևեկութիւնը Հարաւային Ալբանիայում դադարած է։

(Լրագիրներից)

Կ. Պօլիս.—Մալիսօրներին տրված ժամանակամիջոցը զինաթափ լինելու և հպատակութիւն յայտնելու համար՝ վերջանում է 6 օրից յետոյ։ Կառավարութիւնը որոշել է այլ ևս նրանց նոր ժամանակամիջոց չը տալ և վերսկսել պատերազմական գործողութիւնները։ Ընդհանուր հրամանատար Աբդիւլլահ փաշային տրված են համապատասխան հրահանգներ։ Կարծում են, որ ապստամբները հպատակութիւն կը յայտնեն մինչև ժամանակամիջոցի անցնելը։

Վիեննա.—Չեքի-բէյի սպանութեան քննութիւնը երևան հանեց անսպասելի հետևանք։ Ձերբակալվեց նախկին օֆիցէր Մուստաֆ-բէյը, որը պատասխանատու ղեկավարն է երիտասարդ-Թիւրքերի կօմիտէի։ Նա կասկածվում է սպանութեանը մասնակցելուն մէջ։

Կ. Պօլիս.—Պաշտօնական տեղեկութիւններին նայած՝ հրդեհի ժամանակ այրվել են 2,224 մասնաւոր կալուածք, 300 մեծ խանութ, 16 մզկիթ, 1 քրիստոնէական եկեղեցի, 3 սինագօգ, 1 դամբարան, դերվիշների 2 վանք, կառավարական 2 շէնք, մի քանի դպրոցներ, ոստիկանական մի քանի պահակատեղիներ և այլն և այլն։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
19 յուլիսի

Թէհրան.—Մահմէդ-Ալի շահի դէմ ուղարկված զօրամասը բաղկացած է 10000 հետևոտն զինւորներից, մօտ 200 բախտիարներից և 300 ֆէդայիներից։ Ասում են, որ վերջինները ժողովվել են շահի կողմն անցնելու պատրուակով, սակայն իրօք նպատակ ունեն սպանել նրան և ստանալ նրա գլխի համար խոստացված փրկանքը։

Թէհրանում համակրութիւնը դէպի Մահմէդ-Ալի շահը օրէ-ցօր աճում է, բայց կողմնակիցներն առ այժմ թագնվում են երկիւղից դեմօկրատների առաջ։

Մուիզ-ուս-Սալթանէի 20 ձիաւորներ, ստանալով զէնք ու փող, փախան։

Սալար-ուդ-Դօվլէի դէմ կռւելու ուղարկված բախտիարները չեն շտապում Թէհրան մտնել, թէև ստացել են փող ու զէնք։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 15 յուլիսի

Պարսկաստանի քաղաքական հորիզոնը թուխպերով պատած է և հեռու չէ, որ որոտ ու կայծակ թափվեն երկրի գլխին։ Նախկին շահ Մահմէդ-Ալի միրզան Պարսկաստանի սահմաններումն է այժմ. լրագիրներում համառօտ լուր է արդէն։ Թիւրքմէնների մէջն է Մահմէդ-Ալին, ուր վայելում է և՛ յարգանք, և՛ խոստում, և՛ զէնքի աջողութիւն՝ կորցրած գահը վերատին ձեռք բերելու համար։ Եղբայրը, Սալար-ուդ-Դօվլէն, նոյնպէս գործում է ի հաշիւ Մահմէդ-Ալի միրզայի։ Սալարը գրաւեց Քիւրդիստանի շրջանը՝ Սինէն և ուրիշ գիւղեր ու քաղաքներ և հասաւ Համադան, որ գտնվում է նոյնպէս իր իշխանութեան տակ։ Կենտրոնի սահմանադրական կառավարութիւնը հսկայական ջանքեր է թափում բանակ պատրաստելու և Մահմէդ-Ալի միրզայի և Սալարի դէմ ուղարկելու համար։ Սահմանադրականների բանակում, ասում են, Եփրեմ-խանն էլ կայ։ Պարսկաստանի քաղաքներում զինւորական դրութիւն է գրեթէ։ Թաւրիզում ամենախիստ հրամաններ տուեց կառավարութիւնը նպաստաւոր չը խօսելու էկս-շահի մասին՝ սպառնալով խիստ պատիժ։ Մի շաբաթից աւելի է, որ օրական 20—30 մարդու գանակոծ են անում լրտեսների ցուցմունքների հիման վրա։ Արգելված է մանաւանդ «Զանգ» և «Առաւօտ» շաբաթաթերթերին ոչինչ չը գրել և չը տպել Մահմէդ-Ալիի և Սալար-ուդ-Դօվլէի շարժումների վերաբերութեամբ։ Երկու թերթերի խմբագիրներին հրաւիրեց նահանգապետի փոխանորդը և խիստ պատուէր տուեց։ Հեռագրական լուրերը կտրված են համարեա իշխանութեան առանձին հրահանգով։

Կառավարութեան թունդ տրամադրութեան ժամանակ մի ծուրք սպանեց իր կնոջը, նրա սիրականին և իր տղին նոյն րօպէում։ Երկու օր առաջ կախաղան հանվեց ոճրագործը ժողովրդի վրա սարսափ ազդելու համար։ Օրվայ դէպքերի վրա խօսողների ձերբակալութիւնը շարունակվում է. ծեծում են անգթաբար։ Ասողներ կան, որ քիթ ու ականջ կտրելու դէպքեր էլ եղել են։ Այսպէս՝ անտանելի խստութիւն, բայց անտանելի անիշխանութիւն, կեանքի ու գոյքի անապահովութիւն, մըթերքների անօրինակ թանգութիւն, վաճականութեան անկում միշտ և ամեն տեղ։

Յամառ լուր է պտտվում քաղաքում, որ կախաղան է շինվում, որից կախելու են տխրահռչակ կալանաւոր Ռահիմ-խանին։ Եթէ ստոյգ լինի այդ լուրը, պէտք է ասել, որ հետևանքը Ղարադաղի հայերի համար շատ վատ կը լինի. այդպիսի սպառնալիքներ եղել են արդէն։

Մակուի ս. Թադէոս առաքեալ վանքի համար ոչ մի կարգադրութիւն մինչև օրս։ Վանքը վանահայր չունի. կաթողիկոսական տեղական սըբազանը հրահանգել է, որ առաջնորդը Թաւրիզից կամ այլ տեղից մինին ճարէ և ուղարկէ։ Թաւրիզում հայ կղերականների միաբանութիւն չը կայ, այդ՝ միմիայն Էջմիածնի պարտականութիւնն է վանահայր գտնել և ուղարկել օր առաջ՝ վանքի պահպանութեան համար։

Հայկազուն

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ*)

Զ. Ղարադաղ

Եթէ ս. Թադէոս առաքեալի վանքում տեղի ունեցած տխուր անցքերից յետոյ ծանր էր գրիչ վերցնել Մակուի վիճակի սակաւաթիւ հայերի կրթութեան մասին դատելու, որչափ աւելի ծանր են նոյնպիսի խաղաղ խորհրդածութիւնները մեր ժողովրդի այս դժբաղդ հատուածի մասին, որ անցեալում էլ մի օր տեսած չը լինելով՝ այսօր ենթակայ է խիստ դժնդակ հարըստահարութիւնների և հեծում է աւելի ծանր արհաւիրքների սպառնալիքի ներքոյ։

Ղարադաղում կան 4 հայաբնակ վիճակներ 29 գիւղերով, որոնք ձգված են Արաքսի ուղղութեամբ, արևմուտքից դէպի արևելք, 2—5 ժամ հեռու նրանից, լեռների լանջում։ Դիզմարի վիճակի ամենից արևմտեան գիւղը գտնվում է մօտաւորապէս Մեղրի գիւղի դիմաց, իսկ ամենից արևելեան Քէյվանի վիճակի գիւղերը ընկնում են Խուդափէրինի կամ Ջէբրայիլի հանդէպ։ Այդ երկու վիճակների մէջտեղ են Մէշափարի և Մնջուանի գիւղերը։ Ամենից աւելի լեռնային է և խիստ դժուարակոխ ճանապարհներ ունի Դիզմարի վիճակը, որ զետեղված է Ղարաբաղն ու Երևանի նահանգը հիւսիսից հարաւ բաժանող Գարուոյ բարձրաբերձ լեռների հարաւային մասի փէշերում։ Առանձնապէս բարձր լեռներ չը կան՝ թէ այս, թէ միւս մասերում. բայց այնպիսի ահռելի քարակոյտ, որպիսին տարածվում է, օրինակ՝ Մէշափարի և Մնջուանի սահմանի վրա՝ հայոց Ամրադուզ և Նեփեշտ գիւղերի մէջ, Ալպերում էլ քիչ կը պատահի։

Համեմատաբար աւելի լայնանիստ է՝

---

*) «Մշակ» № № 111, 118, 129, 135, 142 և 146.

բերրի սարահարթներով՝ Քէյվանը, որ և գրեթէ ամբողջովին զրկված է անտառներից, մինչդեռ միւս մասերը դեռ ծածկւում են ընդարձակ անտառներ, թէպէտ ընդհանրապէս չարաչար գործածված և շատ տեղեր թփուտների վերածված, մանաւանդ արևմտեան կողմերում, որտեղից ածուխ է մատակարարվում Թաւրիզին և շրջակայքին։ Անտառներից է խլված ամբողջ մշակելի հողը Ղարադաղում և շարունակվում է դեռ խլվել անընդհատ. շատ են արտեր այնպիսի թեք սարալանջերում, ուր չէ կարելի մինչև իսկ գրաստ կանգնեցնել բեռնելու համար, ուր հողի մի մասը զոյգ եզներ լծած նահապետական արօրով վարելուց յետոյ՝ մնացածը պէտք է լինում փայտաներով փորել։ Եւ երկրագործութիւնը այս գաւառի հայերի գրեթէ միակ պարապմունքն է, չը նայելով որ երկիրն ուրիշ աւելի արդիւնաւոր աշխատութիւնների համար առատ միջոցներ է ընծայում։

Մի կողմ թողնելով ամեն լեռնային երկրի համար բնական անասնապահութիւնը, որ այստեղ շատ սահմանափակ չափով է, մածունն ու պանիրն իսկ սակաւ սեղանների զարդ է. հայաբնակ գրեթէ բոլոր գիւղերում կարելի էր մեծ քանակութեամբ շերամ պահել, մի քանի տեղերում մեղուաբուծութիւնը շատ առաջ տանել, բոլոր տեղերում այս ու այն արհեստի համար լիուլի նիւթ գտնել։

Միայն Ղարադաղի հանքերը, որ ճարտարագէտ Կուրմակովի հաշւելով աւելի պղինձ կարող են արտադրել, քան պէտք ունի ամբողջ Ռուսաստանը *), եթէ մշակվեն, ազգաբնակութեան խոշոր տոկոսը ապրուստի նոր միջոց կը գտնէ։ Բայց այժմ սակաւ քանակութեամբ երկաթ է հանվում միայն նահապետական եղանակով, տեղական պէտքերի համար, և մի քանի գիւղերում դարբիններ ու պայտառներ պահում։ Ե՞րբ կը սկսէ իր գործը ռուսական ընկերութիւնը, որ 10 տարի առաջ մենաշնորհ է ձեռք բերել այս հանքերը շահագործելու համար, յայտնի չէ։ Ամեն արհեստ ու արդիւնաբերութիւն երեսի վրա է մնացել առ այժմ. և Ղարադաղի հայերի մեծագոյն մասը ապրուստ է գտնում պանդխտութեամբ, Կովկասում, ընդհանրապէս աղքատ մնում՝ տգիտութեան և կոպիտ բարքերի մէջ։

Թէպէտ սրանք մնացած բոլոր պարսկահայերից աւելի կենսունակ են գուցէ և աւելի արիական բնաւորութեան ու ձիրքերի տէր, ինչպէս ապացուցանում են, օրինակ, Թաւրիզ և ուրիշ կարևոր կենտրոններ գաղթած ղարադաղցիները։ Լեզուով և նիստ ու կացով սրանք շատ քիչ են տարբերվում ղարաբաղցիներից, որոնցից բաժանող Արաքսը միշտ սահման չէ եղել և որոնց հետ այժմ էլ շատ կենդանի յարաբերութեան մէջ են, մանաւանդ արևելեան վիճակները։

Ամենայն հաւանականութեամբ այժմեան ղարադաղցիք ևս գաղթել են Ղարաբաղից՝ ԺԵ դարում. աւելի նախնական ժամանակի ոչ մի հայ յուշարձան ես գոնէ չը գտայ։ Գուցէ այդպիսիները լինեն Քէյվանից դէպի արևելք ընկնող Գեարմադուզի շրջանում և Ահարի մօտիկ դաշտավայրում, ուր առաջ շատ հայեր են եղել և դեռ վերջին դարից բաւականաչափ հետքեր թողել։

Հնագոյն եկեղեցիները (ինչպէս և գերեզմանատները) Նեփեշտում, Մըհդաւում, Ոզանում, Հիւժում, Խանագեահում՝ ԺԷ դարից են, գրեթէ բոլորը նոյն ձևով շինված, մի քանիսն այս ու այն մելիքի նախաձեռնութեամբ։ Խուլ աւանդութիւններ միայն մնացել են այդ մելիքների մասին, որոնցից նշանաւորներն են՝ Միքիդի և Նեփեշտ գիւղերի հիմնադիր մելիք-Ղարագեօզը, Ղասըմիշէնի հիմնադիր մելիք-Ղասումը, Մըհդաւի մելիք-Ջհանը, Վինայի մելիք-Մուշկամբարը, Խանագեահի մելիք-Ազարիան և այլն։ Մելիք-Ղարագեօզի ցեղի մի ճիւղը Կովկասում յայտնի Մելիք-Ղարագեօզեաններն են, իսկ միւս ճիւղը մահմեդականութիւն ընդունելով մինչև այժմ տէր է մնացել Միքիդի գիւղին։

Միւս մելիքների ցեղերից էլ շատերը, ինչպէս Մելիք-Ազարեաններ, Մելիք-Մուշկամբարեաններ և այլն, Կովկաս են գաղթել. բայց կան նաև իրանց տեղերում մնացածներ, որոնք ամեն իշխանութիւն և հողային սեփականութիւն կորցնելով՝ գիւղական աղքատիկների շարքումն են։ Միայն Մելիք-Ջհանեանների ցեղը որոշ իշխանութիւն պահել է Քէյվանում և այդ ցեղի շաւիղ մելիք-Ջհանգիրը, իր հօրեղբայր մելիք-Սարգսի Թէհրանում ձեռք բերած իրաւունքներով այս վիճակի հայերի սարփաբաստ-բէկը համարվելով, երկարատև կռիւների մէջ ուրիշ կալուածներ կորցնելուց յետոյ՝ մնացել է Ասրան փոքրիկ գիւղի տէրը։ Անկասկած սկզբում միւս մելիքներն ևս իշխանաւորներ են եղել՝ կուսական անտառների մէջ իրանց ձգած գիւղերի սեփականատէրերը, և երկար ժամանակ պաշտպանվել են զինու զօրութեամբ՝ կռուելով շրջակայ խաների դէմ. բայց անհաւասար կռուի մէջ նրանց ուժը հետզհետէ սպառվել է. իրանց ենթակայ ժողովրդի հետ նրանք դարձել են այդ խաների գերին ու մշակը, յետին խեղճութեան ու աղքատութեան հասել։

Ներկայումս Ղարադաղի հայերի խեղճութեան հիմնական պատճառը այդ նահանգի աններևակայելի կերպով յոռի վարչութիւնն է։ Նոյնիսկ Պարսկաստանում դժուար թէ մի ուրիշ տեղ գտնվի, որ այսչափ վատ կառավարութեան եղանակ ունենայ։ Մի ընդարձակ երկիր, որ տարածվում է Թաւրիզ-Ջուլֆա խճուղուց մինչև Արաքսի ստորին հոսանքը, ունի միայն մի ընդհանուր կառավարիչ Ահարում, առանց ստորադրեալ իշխանութիւնների։ Կալուածատէր խաներն իրանց պատկանած գիւղերում և իշխան են, և դատաւոր, և ոստիկանութիւն։ Մանր խնդիրներն առտնին կերպով վճռում են՝ ծեծով, տուգանքով, աղայի գոմում բանտարկելով. իսկ մեծ խնդիրների համար՝ երբ գանգատը հասնում է Ահար, այնտեղից այդպէս կոչված մէմուրներ են գալիս, որոնք պարսիկ ատեաններում սնված լպիրշ ու ընչաքաղց պաշտօնեաներ են առհասարակ և որոնց գործը սովորաբար լինում է՝ կաշառք առնել այն ուժեղ անձից, որից գանգատ է եղել, ճանապարհածախք՝ տկար գանգատաւորից, և ապա լուր տանել, որ ամեն ինչ խաղաղ կերպով վերջացրել է։

Այսպիսի պայմաններում հարկաւ արդարութիւն չի մնայ, անզէն ու անպաշտպան հայերը հետզհետէ պիտի տեղի տային սանձարձակ խաների անվերջ հարստահարութեանց առաջ ու ցրիւ գային, եթէ մի քանի գործօնների շնորհիւ փոքր ի շատէ պաշտպանութիւն չը գտնէին։ Մէշափարի և Մնջուանի հայ գիւղերի մեծ մասը, նոյնչափ նաև մահմեդական գիւղեր, վերջին երկու տասնեակ տարիներում անցել են Թումանեանների ձեռքը, որոնց նախկին բնակավայրը եղել է Մէշափարի Ողան գիւղը և որոնք իրանց կարողութեամբ ու ազդեցութեամբ Ղարադաղի ոչ մի զօրեղ խանից յետ չեն մնում. Թէպէտ գինւորական ույժ չունեն, բայց Թէհրանից ու Թաւրիզից արձակել տված հրամաններով, երբեմն էլ իբրև ռուսահպատակ ռուսաց կառավարութեան օժանդակութեանը դիմելով՝ կարողացել են իրանց գիւղերը բաւականաչափ ապահով պահել և ուրիշ գիւղերի հայերին էլ սիրտ տալ։ Քէյվանում յիշեալ մելիք-Սարգիսը մի առժամանակ խաղաղութիւն և ապահովութիւն է հաստատել. իսկ Դզմարում Թաւրիզի Արամեան դպրոցն ունի երկու գիւղ և երեք գիւղամասեր, որոնց պահպանութեան մասին հոգ տանելով Թաւրիզի առաջնորդարանը՝ մնացած բոլոր հայերի համար էլ իբրև ներկայացուցիչ և պաշտպան է հանդիսացել շատ անգամ կառավարութեան առաջ և աջողել ազդու կարգադրութիւններ անել տալ։ Սակայն այս գործօնները կարող են դեր խաղալ խաղաղ ժամանակներում, երբ կառավարութեան դիմել և օգնութիւն գտնել կարելի է, իսկ այսպիսի խառն ժամանակներում, երբ կառավարութիւնը իրական օգնութիւն հասցնել չէ կարողանում, անապահովութիւնը կատարեալ է դառնում և առաջ գալիս բոլոր վտանգների հանդէպ բաց մի բոլորովին անպաշտպան դրութիւն։

Կ. Եպ.

(Կը շարունակվի)

---

*) Մինչև այժմ Ռուսաստանում գործածված պղնձի $^{4}/_{5}$ մասը արտասահմանից է ներմուծվում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

CXIV

Մի հայ ինտելիգենտ չափազանց ոգևորութեամբ խօսում էր օրերս մեր արդիւնաբերութեան մասին։

Նա պրօպագանդա էր մղում կազմել մըսավաճառութեան կօօպերատիվ ընկերութիւն և բանալ մսավաճառական խանութ։

Գաղափարը ըստ երևոյթին շատ էր ոգևորում հայ ինտելիգենտին։ Եւ նա արդէն նկատում էր արդիւնաւէտ ձեռնարկութեան գեղեցիկ հեռանկարը։

— Հինգ ռուբլի, հինգ ռուբլի միայն պիտի տաք,— ասում էր ինտելիգենտը,— և դուք նոյնքան օգուտ կը ստանաք՝ մէկին մէկ։

Ինձ բոլորովին չէր զարմացնում հայ ինտելիգենտի այդօրինակ ձեռնարկութեան ոգևորութիւնը, քանի որ ես ոչինչ տարօրինակ բան չեմ գտնում, երբ ինտելիգենտ մարդը պարապում է վաճառականութեամբ, արդիւնաբերութեամբ։

Ինձ զարմացնողը այն աշխարհահայեցողութեան թեքակէտն (переломъ) է, որը նկատելի է վերջին ժամանակները մեր ինտելիգենցիայի շարքերում։

Կար ժամանակ, որ հայ ինտելիգենտը արհամարհանքով էր նայում արդիւնաբերական հարցերի վրայ։

Նա առնուազն ցանկանում էր լինել բժիշկ, իրաւաբան, ուսուցիչ կամ մի այլ բարձր պրօֆեսիայի ներկայացուցիչ. բայց ժամանակները փոխվեցին և մարդիկ հասկացան, որ не мѣсто краситъ человѣка, а человѣкъ краситъ мѣсто.

Ռոմանտիկ հովերը հետզհետէ անցնում են, և առաջ է գալիս ռէալ աշխարհահայեցողութիւն։

Հայ ինտելիգենտը հասկացաւ, որ ամենից առաջ հարկաւոր է առողջ լինել տընտեսականապէս։

Առողջ տնտեսութիւնը առաջ է բերում և առողջ կեանք։

Սոված փորով և դատարկ գրպանով շատ անգամ և առողջ գլուխը անզօր է առողջ գործունէութիւն առաջ բերել։

Մի անգամ գաւառից Թիֆլիս եկաւ մի շատ համակրելի երիտասարդ։

Նա եկել էր Թիֆլիս մտաւոր աշխատութեամբ պարապելու։

Պարոնը երևանցի էր և դիմեց իմ խորհրդին։

— Ապա պանիրն, ձեր հռչակաւոր սուջուխը՞։

— Ի՞նչ պանիր,— զարմացած դարձաւ ինձ։

— Միթէ դուք թողած ձեր պանիրն և սուջուխը՝ եկել էք պարապելու մտաւոր աշխատանքով։

Պարոնը ծիծաղում էր և չէր հասկանում իմ միտքը։

— Նախ և առաջ դուք ձեր որոնած աշխատանքով սոված կը մնաք, իսկ սոված մարդը շատ բան, այն էլ առողջ բան, արտադրել չէ կարող։ Աւելի լաւ չէ՞ր լինի,— դարձայ նրան,— նստէիք ձեր Երևանում և պարապէիք պանրի և սուջուխի արտահանութեամբ, մանաւանդ ասում էք, որ բաղ էլ ունէք։ Այստեղ պանիրն ծախում են 40—45 կոպէկ փունտը, սուջուխն էլ նոյն գնով, երբեմն աւելի թանգ, և պատրաստված է լինում շատ անգամ վատ, անբաւարար կերպով։ Դուք ինտելիգենտ մարդ էք. գնացէք ուսումնասիրեցէք միրգ չորացնելու արհեստը (сушка) և պանրի ու սուջուխի գաղտնիքը և արտահանեցէք և, հաւատացէք, մեծ գործ արած կը լինէք։ Դուք զարկ կը տաք ձեր երկրի արդիւնաբերութեանը։ Գնացէք պանիր վաճառեցէք,— ասացի ես։

Համակրելի երիտասարդը մտածմունքի մէջ ընկաւ։

Նա մի քանի օրից անյայտացաւ Թիֆլիսի հօրիզոնից և գնաց, կարծեմ, հայրենիք։

Այսպէս թէ այնպէս՝ ինտելիգենտի մսավաճառութեամբ ոգևորվելու գաղափարը ժամանակի սիմպտոմ է։ Մարդիկ կարծես արթնանում են և լրջանում ու տեսնում են, որ ամենից առաջ աշխատել պէտք է, գործել այն գաղափարի շուրջը, որ արդիւնաբերութեան զարկ է տալիս։

Եւ «պանիրն» այսօր կարծես տեղ է գրաւում մեր ինտելիգենտի ուղեղում, աշխարհահայեցողութեան մէջ։

Բարի ճանապարհ։

Յակովբ Գինջեան

ԵՌԱԿԻ ՇԱՌԼԱՏԱՆՈՒԹԻՒՆ

Անկարելի է լռել այն անձնաւորութիւնների մասին, որոնք իրանց անհատական շահերի համար կանգ չեն առնում ոչ մի անբարոյական միջոցի առաջ, որոնք ամենայն գիտակցութեամբ դիմում են ստորագոյն և խարդախ միջոցների, միայն թէ հասնեն իրանց նպատակին, այն է՝ շառլատանութեամբ աշխատեն փող. և այն էլ ինչպէ՜ս, նամականդրոշմներով։

Ասածներս անմիջապէս վերաբերում են պետերբուրգաբնակ ոմն Եա. Կ. Պետերսին, որը իր ամենօրեայ ողորմելի յայտարարութիւններով՝ հայոց լեզուով՝ փորձում է մեր խեղճ կեանքում որսալ միամիտներին և խեղճերին այնպէս, ինչպէս քաղցած գազանը որսում է գառներին։

Պետերսը ի գիտութիւն հայ մասսայի յայտնում է իր յայտարարութիւնների մէջ, թէ 40 օրվայ ընթացքում իր ձեռնարկով (ուրիշները, ասում է, ռեկլամ են) ցանկացողները կարող են սովորել գրել և կարդալ եւրոպական բոլոր՝ համարեա թէ՝ լեզուները, նոյնիսկ խօսել այդ լեզուներով։

Նոյն պարոնը երկրորդ իր յայտարարութեան մէջ առաջարկում է ցանկացողներին իր «խորհրդարական» գիրքը, որն արժէ 3 ր. 35 կ.։

Երրորդ իր յայտարարութեան մէջ պարոնը լիակատար յանդգնութեամբ յայտարարում է, թէ «չը կան այլ ևս հիւանդութիւններ», և 1 ր. 30 կոպէկով առաջարկում է մի գիրք այնպիսի հիւանդութիւնների դէմ, որոնցից հազիւ թէ մի օր մարդկութիւնն ազատվի։ Միթէ ընթերցողը, այս ամենը կարդալով, չի համոզվի, որ Պետերսը փող կորզելու համար պարապում է միաժամանակ և «խորհրդարարութեամբ», և «լեզուագիտութեամբ», և «բըժշկութեամբ»։ Բայց միայն Պետերսը չէ պարապում այդ շառլատանութեամբ. եղել են և կան շատերը։ Թող ընթերցողը յիշէ անցեալ տարին, երբ Պետերբուրգում մահվան չափ ծանր դատավճռի ենթարկվեց «Հնդկական բալզամ» հնարող Ավրախովը, որի մութ գործերին անմասն չէր տխրահռչակ բժիշկ Պանչենկօն։ Պէտք է ոչնչացնել այդպիսի շառլատան մարդկանց լարած թակարդները, այլապէս նրանք կարող են վնասել հասարակական կեանքը այնպէս, ինչպէս մակաբոյծները քայքայում են օրգանիզմը, և մեր լրագիրները նման դէպքերում զգալի ծառայութիւն արած կը լինէին հայ ժողովրդին, եթէ յայտարարութեան չառնէին այդ ռէկլամները։ Ամբողջ Ռուսաստանում կայ մի հատ միայն շաբաթաթերթ և մի ամսագիր (Врачебная газета и Практическая медицина) որոնց մէջ ոչ մի դէպքում չեն տպվում այդպիսի յայտարարութիւններ։ Բաւական է մարդիկ այդչափ ստոր միջոցով փող վաստակեն, հազարներ դիզեն. վաղ թէ ուշ այդպիսիների վերջը դատարանում կը պարզվի։ Բայց քանի դեռ այդ մարդիկ ամենայն զգուշութեամբ և ճարպկութեամբ են առաջ տանում իրանց ստոր գործը, կը յուսանք, որ հայ բանւոր և գիւղացի մասսան՝ զրկված բոլոր միջոցներից անձամբ տեսնելու Պետերսների իրան համար լարած թակարդները՝ խորհրդաւոր դէպքում չի մտնի իր կեանքը մեծախօս շառլատաններին։ Նոյնը պէտք է ասել և ոմն մօսկվայաբնակ «Մէգէրդիչ (?) Մուրէլի» հասցէին, որ մի քանի օրվայ ընթացքում «իր մեթօդով» բուժում է հօնօրրէյ (տրիպպեր) հիւանդութիւնը։

Ահա ձեզ նոր հաւեր, որոնք ածում են ոսկէ ձուեր։

Վահ. Մամիկոնեան

Մօսկվա

ՄԻ ՆՈՐ ԹԵՐԹ

«Մշակը» հաղորդել էր, որ յուլիսի 15-ից Բաթումում սկսել է լոյս տեսնել վրացերէն լեզուով քաղաքական-հասարակական և գրական մի թերթ «Բաթումիս Գազէթի» անունով։

Թերթի առաջին համարի առաջնորդող յօդուածը վերաբերում է մամուլի համար ստեղծված այն դժուարին կացութեան, որ ապրում է նա մեր մէջ, մինչդեռ աւելի կուլտուրական երկրներում նրա դրութիւնը գերազանցօրէն բարձր է մեզանից, որովհետև մամուլը դարձել է անհրաժեշտութիւն, մինչդեռ մեզանում նա ենթակայ է ամեն կարգի պատահականութիւնների, որպիսի դրութիւնից զերծ չէ նաև վրաց մամուլը։

Թերթը գանգատվում է, որ մեզ մօտ, բաւական չէ, որ առ հասարակ թերթերի ընթերցողների թիւը հազիւ է անցնում 2000-ից, դեռ ևս մեր երկրի արդիւնաբերութեան ներկայացուցիչները թերթերին բաժանորդագրվում են ռեկլամներ ստանալու նկատումով. այս էլ բաւական չէ. ամեն մի նոր թերթ, որ հրապարակ է գալիս իր միսիան կատարելու, նա հանդիպանում է նոյն իսկ գրչի մարդկանցից թշնամանքի, որոնք ոչ թէ սկզբունքային տեսակէտից են քննադատում իրար գրածները, այլ լոկ անձնականով առաջնորդվելով, վիրաւորում և ցեխոտում են միմեանց։

Մի խօսքով թերթը գանգատվելով մեր իրականութեան մէջ տիրող բացասական երևոյթների նկատմամբ, այնուամենայնիւ գտնում է, որ հէնց այսօրինակ աննպաստ պայմանների մէջ պիտի գրել և թերութիւնները խարազանել, պահելով անհրաժեշտ՝ ունենալ անկախ և անկաշառ մամուլ։

«Բաթումիս Գազէթի» թերթի խմբագրութիւնը ընթերցողների առաջ չէ դնում իր raison d'etre-ը, այլ յայտնում է՝ «ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի»։

Նա յայտնում է, որ իր դռները բաց են այն ամենի առաջ, որոնց «սիրտը լի է սիրով դէպի իրանց հայրենիքը, քրտնաթոր աշխատաւորութիւնը և համայն մարդկութիւնը»։ Գիտակցելով լուրջ և անկաշառ օրգանների անհրաժեշտութիւնը մեր ապականված իրականութեան համար, մենք ի սրտէ ողջունում ենք մեր վրացի եղբայրակից թերթի երևան գալը Բաթումի նման քաղաքում, ուր վաղուց ի վեր կարիք էր զգացվում մի չէզոք թերթի։

Սիրում ենք յուսալ, թէ «Բաթումիս Գազէթին» պիտի կարողանայ իր առաջադրած հրատապ հարցերին ծառայել, պաշտպանելով բարին և նշաւակելով չարն ու վատը և քարոզելով մեզ համար այնքան սիրելի և ըղձալի համերաշխութեան գաղափարը, Կովկասի ազգերի և մասնաւորապէս բնիկ ազգերից առաջաւոր՝ հայ և վրացի տարրերի միջև, որը մեր կարծիքով, լինելու է իւրաքանչիւր ազատախոհ օրգանի գերագոյն և վսեմ նպատակներից մէկը։

Ցար. Գասպարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դիլիջանի անյարմարութիւնները

Դիլիջան, 10 յուլիսի

Կովկասեան ամառանոցները դիրքերի և բնութեան կողմից համեմատվում են Շվէյցարիայի բնութեան հետ։ Դրանցից, օրինակ Դիլիջանը օժտված է թէ բնութեան գեղեցկութեամբ, թէ օդը մաքուր, առատ և առողջարար ջրով։ Այդ վայրը, շնորհիւ տեղացիների յետամնացութեան, իր նպատակին չէ կարողանում ծառայել։ Տարիներ առաջ, երբ դեռ Թիֆլիսից Երևան երկաթուղային ճանապարհ չը կար, այստեղից էր երթևեկութիւնը. և դա ծառայում էր ճանապարհորդների համար մի հանգստանալու վայր, բնական է, որից և օգտվում էին տեղացիք. իսկ այժմ, երբ զրկված են դրանից, տեղացիք օգտվում են ամառանոց եկողներից։ Բայց որովհետև գիւղը զրկված է շատ յարմարութիւններից, ինչպէս, օրինակ, սենեակները շատ անյարմարութիւններ ունեն, խաւար ու զուրկ են լուսաւորութիւնից, ճանապարհները վատ են, ուստի չի կարողանում ծառայել իր նպատակին, չը նայած որ վերջին տարիներս այստեղ եկւորների շնորհիւ մի քանի բարենորոգումներ եղել են, օրինակ՝ ռօտոնդոյի վերանորոգումը, որտեղ ներկայացումներ են լինում. բայց շատ բաներ կան, որ հարկաւոր է լրացնել։

Վանիկ

Գիւղի տխուր իրականութիւնից

Դարաչիչագ, 15 յուլիսի

Դարաչիչագի առևտրականներից իւրաքանչիւրը ամեն տարի ծախում էր մօտ 100—200 խալվար հացահատիկ, 3,000—6,000 պուդ, բայց այժմ նա ինքն իր տան համար գնում է Ռուսաստանի ալիւր։ Առևտուրը մեռած է։ Մեր շրջակայ գիւղացիք, մօտ 25 գիւղ, գտնվում են շատ նե դրութեան մէջ. կան մինչև անգամ 3 օ սոված մնացողներ. երեխաները լալով հա րեան գիւղերից հաց են մուրում։ Սակայ այս տարվայ հացի բուսականութիւնը դե մեզ պարզ չէ, որովհետև տարի չէ եղե որ մեր հացերը կարկուտը չը ծեծէ կա անձրևի հեղեղներ մի քանի հարիւրաւ արտեր չողողեն չը տանեն կամ թշնա մարդիկ չը կրակեն իրանց հարևաննե հասած արտերը, և այլն։

Մեզանում կան մարդկանց հիւանդո թիւններ, բայց ոչ վնասակար. կայ տաւա ղաբաղ, որը բռնում է կենդանու բերանի ու ոտներից. կոտորված են մեծ քանակու թեամբ ոչխարներ։ Գառն անցեալ տար մեզանում շատ թանգ էր, 2 ր., բայց այժմ 4 ր. 50 կ., 5 ր. ու 6 ր., ոչխարը 12—1 ր.։ Խոտ բոլորովին չը կայ մեզանում։

Ց. Շառօյեան

Շուշու հասարակութեան ակնկալութիւնը

Շուշի, 18 յուլիսի

Ներկայումս, երբ տեղական հոգևոր կառավարութիւնը յանձին Զաւէն վարդապետ տեսնում է իր կառավարչին, հասարակութեան պրոգրէսիվ տարրերի մէջ բնականաբար հարց է ծագում, թէ ի՛նչ ծրագր պէտք է գործէ նա, ի՛նչ եղանակով պէտ է իրագործէ թեմի բազմաթիւ խնդիրնե մշակութիւնը և լուծումը, ի՛նչ ձևով պէտ է ծանօթանայ հասարակութեան տրամադրութեան հետ և ըմբռնէ նրա կարծիքը այս ու այն խնդրի վերաբերութեամբ այլն։ Ղարաբաղի թեմ. հոգևոր կառավարութեան ամեն մի ճիւղ սպասում է փորձառու, խոհուն ու տոկուն բնաւորութեան տէր մի անձի, որ կարողանայ մղել ամեն անակնկալների դէմ, բարեկարգել գործերի ընկած դրութիւնը, հաստատել կարգապահութիւն և օրինապահութիւն բոլոր այն վարչական և կուլտուրական գործերում, որոնք կապված են տեղական հոգևոր կառավարութեան հետ, և այդպիսով վերջ դնել այն կամայականութիւններին, քմահաճոյքներին և երեսուն գործունէութեան, որոնք տիրել էին վերջին տարիները Ղարաբաղի թեմին և քարուքանդ արել ամեն բան... Անտարակոյս հ. Զաւէնի առաջ բացված է մի լայն, միևնոյն ժամանակ դառն աշխատանքներ պահանջող ասպարէզ. և այս ասպարէզի վրա առաջին տեղը կանգնած են մեր ուսումնարանական և կալուածական գործերը։

Կը կարողանա՞յ արդեօք Զաւէն վարդապետը իրագործել մեր հասարակութեան լաւագոյն յոյսերն ու ցանկութիւնները, դա ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Պօղ. Զաքարեան

Աշակերտական էկսկուրսիա

Դերբենդ, 16 յուլիսի

Ամսիս 9-ի առաւօտեան վերադարձան ճանապարհորդութիւնից մեր քաղաքի ռէալական ուսումնարանի աշակերտները, որոնք, թւով 14 հոգի, առաջնորդութեամբ դպրոցի տեսչի և երկու ուսուցիչների, 19 օր շրջագայելով այցելել են Վլադիկավկազ, Թիֆլիս, Մցխէթ, Բաթում, Նովի-Աֆօն, Սուխում և Նովօրոսիյսկ։ Ճանապարհորդութիւնը անցել է շատ լաւ և միանգամայն օգտաւէտ աշակերտների համար։ Այժմ, ինչպէս լսում ենք, նոյն դպրոցի բարձր դասարանների և օրիորդաց գիմնազիա հայոց լեզուի ուսուցիչը մտադիր է օգոստոսի սկիզբներին կազմակերպել աշակերտական զբօսանք մանաւորապէս դպրոցի բարձր դասարանների հայ աշակերտների համար, որոնք կտրված լինելով հայկական կեանքից շատ քիչ ծանօթ են հայկական անցեալի, կուլտուրայի, պատմական վայրերի և սրբութիւնների հետ։ Եթէ ուսուցչի ցանկութիւնը աջողվի, շատ լաւ կը լինի հայ աշակերտութեան համար։ Որքան մեզ յայտնի է, դպրոցական վարչութիւնը սիրով կը թոյլատրի այդպիսի զբօսանքի կազմակերպութիւնը և ամեն կերպ կաշխատի նըպաստաւոր պայմաններ ստեղծել. միմիայն կարևորը այն է, որ աշակերտներն ու նրանց ծնողներն էլ զգան դրա օգտակարութիւնը և առաջիններն իրանց պատրաստակամութեամբ, իսկ վերջինները նիւթական օժանդակութեամբ գան օգնելու և ի կատար ածելու այդ օգտակար ձեռնարկութիւնը։ Ի միջի այլոց պէտք է ասեմ, որ, որքան ինձ յայտնի է, յիշեալ ուսուցիչը ծրագրել է աշակերտներին առաջնորդել հետևեալ վայրերը՝ Թիֆլիս, Սանահին, Հաղբատ, Ալէքսանդրօպօլ, Կարս, Անի, Էջմիածին, Օշական, Աշտարակ, Երևան, Գեղարդ, Սևան և ապա Դիլիջանի վրայով Աղստաֆա և այնտեղից Դերբենդ։

Օտարական

Ոճրի մանրամասնութիւնը

Թումբուլ (Հին-Նախիջ. գաւ.), 13 յուլ.

Ի լրումն ամսիս 5-ին գրած տեղեկութեան, մեր գիւղում պատահած զարհուրելի ոճրի մասին, հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները։

Յուլիսի 4-ի գիշերը Թումբուլում, տեղիս թուրքերի մասնակցութեամբ, իր տան կտրի վրա, քնած ժամանակ, սպանվեց Գաբրիէլ Այվազեանցը, մի համեստ հիւսն, որ դառը աղքատութեամբ հազիւ հայթայթում էր ողորմելի ընտանիքի օրվայ պաընկը. բերդանի գնդակով ստինքից վիրաւորվեց չար պատահարի եկած զոհի Սաթենիկ կինը, որը հայ կնոջը յատուկ համառութեամբ հերոսաբար պաշտպանեց ամուսնուն, երբ վերջինին քաշ էին տալիս մարդ գազանները երկրորդ գնդակը խփելու, Սաթենիկը ուժասպառ ընկնում է արիւնաքամ, գազանները մէջքի վրա ձգում են քնած զոհին երկրորդ գնդակը կրծքից արձակելով, որ մէջքի մէջտեղից մի ահռելի վէրք բացելով դուրս էր թռել դաւաճան գնդակը հրացանների պայթիւնից յետոյ լսվեց մի խուլ ու ցաւալի հառաչանք ու զոհը տեղն ու տեղը փչեց շունչը և ապա հետևեցին խառնափնթոր օգնութիւն հայցող կոչեր, գիւղի հայերի մասը ոտքի ելաւ, բայց արդէն ուշ էր. այդ գիշեր թէ հաւաքի ժամանակ և թէ յետոյ հարևան Թուրքերից և ոչ մէկը չերևաց. որբ ու սոված մնացին անմեղ զոհի 12 տարեկան որդին—Վարդանը, որ վախեցած արիւն է թքում, մօտ 100 տարեկան զառամեալ Նանա մայրը, որը խելագարի նման շարունակ կրկնում է. «բա ինչ կը լինի մեր ընտանիքի դրութիւնը». վիրաւորված Սաթենիկը նոյնպէս կը զրկվի արգանդում պատած զաւակից, եթէ ինքը կենդանի մնայ. կարճ ասած մարեց մի հայ օջախ ևս։

Կենդանի մնացած Սաթենիկի ցուցմունքների համաձայն սպանութիւնը տեղի է ունեցել համագիւղացի Մէյտի միրզա-Ջալիլ օղլու, որին պարզ կերպով կարողացել է ճանաչել և պարսկահպատակ Մակուի խանութիւնից Ղըզըլղշլաղ գիւղացի Աբդիւլ Սամադ մօլլա Իբրահիմ օղլու ձեռքով. Աբդիւլ Սամադը նոյն մաքսանենգն է, որ յունիսի 5-ին իր երկու ընկերներով ձերբակալվեց Թմբուլ գիւղում Թէյի հետ և ապա Նախիջևանում յաջողացրեց փախչել. դա, եթէ չասեմ աւելին, յայտնի ջանբէզարի, մաքսանենգի, աւազակապետի հռչակ ու պատիւ է վայելում յայտնի շրջաններում։ Աբդիւլը շատ արիւններ է տեսել. 1905 թ. կոտորածներում նշանաւոր դեր է կատարել Աբդիւլի ընկերը նոյնպէս գրաւականով ազատված է բանտից Նախիջևանցի մզագործ Հաջի Իբրահիմ Խալիլի և Թուրք վաճառականներ Քալանթարովների դրած գրաւականով, իսկ մաքսանենգների երրորդ ընկերը, որը բանուորի դեր է կատարելիս եղել. այժմ նստած է բանտում. ինչ վերաբերում է Թմբուլցի Մէյտիին դա Թմբուլ գիւղի կոտորածում առաջնակարգ դաստաբաշու դեր է կատարել 1905 թ. գիւղի 21 երկու սեռին էլ պատկանող զոհերից ողջ մնացած ազգական ու ամուսինները դեռ կենդանի վկաներ են Մէյտիի կատարած սոսկալի տանջանքներով լի սպանութիւններին. ձերբակալվեց այդ Մէյտին, որը թէ կոտորածներից առաջ և թէ յետոյ մի կատարեալ չարիք էր դառել Թմբուլ գիւղի գլխին, կոտորածներից առաջ մարդ վիրաւորելու համար 6—7 ամիս նստել է Նախիջևանի բանտում և զրկված է Մէյտին մի քանի մանաւոր իրաւունքներից. էլ չեմ ասում թէ ինչպէս տարիների ընթացքում կերել է գիւղացիների ցանքը, այգին ու պարտէզը և անթիւ չարիքներ է հասցրել հարևան հայերին... ձերբակալվեց հասարակութեան այդ վնասակար անդամը, բայց չը մնաց նրա ցանած չար սերմերը, նրա ընկերներից Աբդիւլ Սամադը որ այժմ ազատ շրջում է նորանոր չարիքներ է նիւթում Թմբուլի հայերի գլխին. այդ Աբդիւլը որ ոճրագործութիւնից յետոյ փախչելով Թուրքերի Թաղը իր ընկերներով. ասում են, շրջում է Թմբուլի դաշտերում և յաճախ ապաստան գտնելով մեր դրացի Թուրքերի մօտ արգելք են հանդիսանում չարքաշ հայ գիւղացուն առաջ տանելու իր տնտեսութիւնը... Պէտք է ասել, որ Պարսկաստանի և մանաւորապէս Մակուի խանութեան սահմանամօտ Թուրք գիւղերը մանաւանդ Ղըզըլղշլաղը, Ղամբար-Քանդին մի կատարեալ չարիք են դարձել Արաքսի այս կողմի սահմանակից խաղաղ շինականի գլխին. մաքսանենգները ունեն ընկերներ և այս կողմի սահմանի մօտ գիւղերում, զանազան միջոցներով անցնում են սահմանը բերելով թէյ, շաքար, ճոթեղէններ և դրա փոխարէն ետ դառնալուց քշում անցկացնում Արաքսը գիւղացիների եզ, կով ու գոմէշները յաճախ իրանց այս կողմի ընկերների առաջնորդութեամբ. հէնց այս ամսի 10-ին Թմբուլի արօտատեղից քշել են Պետրոս Յակոբխանի լծկան եզը, շշուկներ են պտտում թէ մաքսանենգները սպառնում են Թմբուլ գիւղի հայերից մի քանի հազար րուբլու ապրանքներ գողանալու ու նորանոր սպանութիւններ գործելու. հրաւիրում ենք գաւառապետի ամենալուրջ ուշադրութիւնը աւազակների և գլխաւորապէս վերջիններին ապաստան տուողների վրա...

Աստ.

Քահանայական հարցը Քութայիսում

Քութայիս, 18 յուլիսի

Երէկ, ժամերգութիւնից յետոյ, տեղի ունեցաւ ծխ. ժողով երկրորդ քահանայի հարցի առիթով։ Ժողովին նախագահում էր բժ. Կ. Աշճեանը։

Վարդաշէն գիւղի հովիւ երիտասարդ Ներսէս քահ. Մանուէլեանին Քութայիսից առաջարկել էին երկրորդ քահանայի պաշտօն՝ խոստանալով տարեկան մօտ 1,200 ր. մինչ, ուստի նա եկել էր Քութայիս գործին իրազեկ լինելու համար։ Այդ օրը քահանան պատարագիչ էր և անձամբ էլ ներկայ էր ժողովին։ Հարց եղաւ, թէ ի՛նչ աղբիւրից պէտք է հայթայթվի որոշված գումարը։ Ցոյց տվեց, որ այդ գումարը պէտք է կազմվի գլխաւորապէս պետական դպրոցներից կրօնուսուցութեան համար ստացված ռոճիկից, սակայն պետական դպրոցներում կրօնի դասերը դեռ աւանդում է Գէորգ քահ. Սուլաղեան, որը այժմ բացակայ է քաղաքից, բայց սեպտեմբերին պէտք է գայ և շարունակէ իր գործը։ Այս հանգամանքը ջերմ վիճաբանութիւն առաջացրեց, գլխաւորապէս այն պատճառով, թէ ինչ կերպով պետական դպրոցներից հեռացնել Սուլաղեան քահանային և նրա դասերը յանձնել նոր քահանային։ Եղան առաջարկողներ, որ մի պատգամաւորութիւն գնայ Թիֆլիս և խնդրէ եպիսկոպոսին, որ սա միջնորդութիւն յարուցանէ հոգաբարձուի մօտ՝ պետական դպրոցներից հեռացնելու Սուլաղեան քահանային, նրա տեղ նշանակելով Մանուէլեան քահանային, բայց այդ առաջարկը անիրագործելի գտնվեց։ Ժողովը ոչ մի եզրակացութեան չեկաւ և նորեկ քահանան մնաս բարև ասելով՝ հեռացաւ Քութայիսից ի ցաւ բոլորի...

Քութայիսում անպայման կարիք կայ 2 քահանայի, որովհետև մի քահանան անկարող է թէ պետական դպրոցներում դասաւանդել և թէ հոգևոր պաշտամունքները կատարել, բայց Քութայիսի ժողովուրդը աղքատ լինելով անկարող է ապահովել նիւթապէս 2 քահանայի, իսկ նորեկներն էլ մոռանալով Փրկչի այն պատուէրը թէ՝ «գնացէք երկրից երկիր և հովւեցէք ժողովուրդը և ձեր գոտիի մէջ չը վերցնէք ոչ արծաթ և ոչ պղինձ»—ամենից առաջ նիւթականն են առաջադրում։ Բայց գուցէ այն ժամանակ քահանայի համար ամեն բան ձրի է եղել, իսկ այժմ պայմանները փոխվել են և կեանքը իրանն է պահանջում։

Այսպէս թէ այնպէս, Սուլաղեան քահանան մի վէրք է դառել Քութայիսի հայերի մարմնի վրա և ոչ մի կերպով չէ աջողվում անդամահատել նրան։ Առաջ նա կօնսիստորիայումն էր կչկչվել, այժմ էլ կառավարական դպրոցների պատեանումն է գամվել։ Եւ այսպիսով՝ քահանայական հարցը Քութայիսում դարձեալ իր լուծումը չը ստացաւ։

Ս. Նազարեան

ՄԻ ԱՒԱԶԱԿԱԽՈՒՄԲ ՋՆՋՎԱԾ

Խան-Բուլաղ (Ղազախի գ.), 14 յուլ.

Գաւառիս երկրորդ մասի պրիստաւ Բաղիրբէգովը զանազան զեղծումներ կատարելուն համար պաշտօնից հեռացվեց, նրա տեղ նշանակվեց Նախկին պրիստաւ Վանօբէգ Երալեանը, յատկապէս աւազակային խմբերը ոչնչացնելու համար։

Ղազախի գաւառում կան զանազան աւազակային խմբեր, որոնցից ամենայանդուգն ու վտանգաւորը Ջահանգիրի խումբն է։ Նա սպանել է և փախել է Ղազախի բանտից 1909 թ.։ Նրա գլխաւոր ապաստարանը համարվում է Ղարայազի անտառը։

Պրիստաւ Երալեանը Կօթի գիւղում եղած ժամանակ գաղտնի կերպով իմաց են տալիս թէ՝ Ջահանգիրն Աքսիբարայից 1 հրացան, Փարաքլուից 1 ձի խլելով անցել է Աթան, այնտեղից 2 ձի է բռնել և մէկ եւբեխայի էլ վիրաւորելով անցել է սարերը։ Վանօ-բէգը լսելուն պէս՝ պատրաստվում է և խուրջն ընկնում, վերցնելով իր հետ 8 ստրաժնիկ և Կօթ գիւղի քաջ տղաներից մի քանիսին։ Այս խումբը աւազակի հետևից ընկնելով 150 վերստ տարածութիւն է անցնում և հասնում է Նոր-Բայազէտի գաւառի Փարուխ կոչված սարը՝ արևի ծէգ հա ծէգին։ Խումբը տեղին անծանօթ է լինում, որի համար էլ պրիստաւն իր մօտ եղած ույժը բաժանում է մի քանի խմբերի և զանազան ուղղութեամբ ուղարկում է, իր մօտ թողնելով ստրաժնիկ Արշակին. ապա սկսում է դիտել հեռադիտակով։ Արշակն առաջ գնալով մի ձորում թամբած ձի է նկատում և իսկոյն վերադառնում պրիստաւի մօտ՝ իմաց տալու։ Վերջինս, մօտենալով յիշեալ ձորին, ճանաչում է աթանեցու «Խօրզա էդիրին». Ահա այդ րօպէին պատրաստվելիս են եղել ձիաւորվելու։

— Մի շարժվէք տեղներիցդ,—կոչում է Վանօ-բէգը աւազակներին,—ապա թէ ոչ կոտորելու եմ։

Աւազակները պատասխանում են հրացանների համազարկով։ Սկսվում է կատաղի կռիւ՝ մէկը մէկի դէմ։ Պրիստաւը սարի գլխին է լինում դիրք բռնած, իսկ աւազակները ձորում։ Երալեանը իր գլխարկն ամրացնում է դիրքի վրա, որին հակառակորդներն սկսում են գնդակահարել, իսկ ինքն անցնում է միւս կողմը և սկսում է գնդակահարել։ Աւազակներն էլ սկսում են իրանց դիրքը փոխել։ Պրիստաւն աշխատում է ձիերը բաժանել-հեռացնել աւազակներից՝ փախչելու հնարաւորութիւնից զրկելու համար նրանց։ Սպանում է մէկ ձի և երկուսին էլ մօտներից հեռացնում ու նրանց դիրքը փոխում։ Ահա այդ տեղափոխութիւնից յետոյ պրիստաւը լսում է «վայ անանա» հառաչանքը։ Ետոյ իմացվեց, որ Ջահանգիրը երեք տեղից վէրք է ստացել, ինչպէս և մնացած ձիերից երկուսը ևս վիրաւորվել էին։

Կռիւը տևում է ամբողջ երեք ժամ։ Պրիստաւի փամփուշտը սկսում է հատնել, մէկն է մնում։

Հրացանների տրաքոցների վրա՝ սկսում են պրիստաւի ցրված մարդիկը ժողովվել, որը նկատելով աւազակները՝ փախչում անտառն են մտնում, թողնելով 35 ձի, որոնցից մէկը սպանված է լինում, երեք թանգարժէք թամբ, 2 խափնչի, մէկ մէշիկ կապած փամփուշտի խուրջին։

Յիշեալ ձիերն և իրերը ներկայացնում է պրիստաւը գաւառապետ Ռէուտին։

Մի քանի օրից յետոյ Ջահանգիրի ընկերներից երկուսը ներկայանում են պրիստաւին, որոնք ուղարկվում են բանտ և 500-ական ր. գրաւականով բաց թողնվում։ Դրանից մի քանի օր անց՝ պատահում են Ջահանգիրի երրորդ ընկերոջը։ Վերջինս նկատելով պրիստաւին հեռուից՝ սկսում է փախչել, բայց ստրաժնիկ Վարդանի գնդակից ձին գետին է ընկնում-սպանվում, աւազակին էլ բռնում են՝ խլելով երեք-գծանի հրացանը 70 փամփուշտով։ Պէտք է ասել, որ աւազակները համարեա թէ բոլորն էլ զինված են նոր սիստեմի երեք-գծանի հրացանով։ Այնպէս որ Ջահանգիրի խումբը, որ առաջ ամբողջ գաւառում սարսափ և երկիւղ էր առաջացրել, առայժմ չքացել է։

Պէտք է ասել, որ պրիստաւներ Երալեանը և Մ. Սարատիկեանը (առաջ Ջալալ-Օղլիում, իսկ այժմ Ղարա-Թափայում) ամեն կերպ աշխատում են աւազակների և գողութեան ոչնչացմանը. անցեալ տարիներում, որ տասնեակներով լծի եզներ և գոմէշներ էին մորթում, այս տարի դեռ ոչ մի դէպք չէ պատահել։

Փօրաւէբ

ՍԱՂԻԱՆՈՒՄ

✦ Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, ներկայումս Սաղիան գիւղում գոյութիւն ունեն գիւղատնտեսական դասընթացքներ և մի փոքր հողաբաժին դրված է դասընթացքների ղեկավար գիւղատնտես Խ. Երիցեանի տրամադրութեան ներքոյ, որտեղ պարոնը պլանտաժ է անել տուել և տնկտել է շարքով վազի մատներ, իբրև ի ցոյց հասարակութեան, որ գերադասելի է այգին շարքով տնկել, քան թէ առանց շարքի, ինչպէս այժմս ամբողջ Շամախու գաւառի այգիներ են։

Գիւղացի ինտելիգենտ դասակարգը արդէն համոզված է, որ շարքով տնկված այգին գերադասելի է. աշխատանքը հեշտ է կատարվում և այգետիրոջ վրա էժան է նստում մշակելը։ Իսկ գիւղացի ծեր քեռխուդաները չեն հաւատում, որ հիւանդացած այգին կարող է բժշկվել, որ շարքով տնկված այգին մի շարք առաւելութիւններ ունի։ Նրանք համարում են հիւանդութիւնը Աստուածանից ուղարկված։

Առ հասարակ նման հաւատը ընդհանուր է մեր ներկայ իրականութեան մէջ։

✦ Գիւղատնտես Խ. Երիցեանը մի ամսով բացակայելուց յետոյ վերադարձաւ երէկ. նա ամսիս 15-ից սկսած պէտք է պարապի ունկնդիրների հետ գինեգործութեամբ։ Յաճախողների թիւը, հաւանականէ, կը բազմապատկվի, որովհետև Երիցեանը յայտարարութիւն է տուել, որ շրջանիս գիւղացիները կարող են օգտվել այս մասնագիտութիւնից, քանի որ իրանք էլ պարապում են գինեգործութեամբ, բայց չը գիտեն ընտիր և դիմացկուն գինի պատրաստել, որը կապրի մի քանի տարիներ և արժէքը թանգ կը լինի... գիւղիս պատանի ուսանողները, որոնք ամառային արձակուրդի պատճառով գիւղ են եկել, հաւանական է էլ օգուտ կը քաղեն հանգամանքից և կը սովորեն։

✦ Այսօր Երիցեանի ընկերակցութեամբ մի քանի ունկնդիրներ այցելութեան գնացին մեր փոքրիկ փորձադաշտը, մեր պլանտաժը, մեր միակ յոյսը, և ինչ տեսանք... Մեր աչքերին պատկերացաւ մի եղեռնագործունէութիւն։ Տնկված մատները, որոնք պէտք է ճիւղաւորված ու տերևակալած լինէին, որը կոտրված էր, որը հանված, որն էլ մէկը այստեղ, միւսը այնտեղ կիսակենդան ընկած։ Սկզբում մեզ թւաց, որ մի նախրի հօտ է թափվել մեր փորձադաշտը, սակայն եթէ եղեռնագործը անասուն լինէր, գոնէ նա չորացած փայտերը կը պահէր։

Բայց չոր մատներն էլ չը կան. նրանք հողի մէջ չեն, այլ երևում են կոտրված ու թափված։ Ինչպէս երևում էր, իւրաքանչիւր մօտից անցնող՝ մի հարուած է հասցրել մեր հողաբաժնին։ Ինչի՞ նշաններ են այս բոլորը։ Հարցնում ես գիւղացի բանիմաց մարդուց, թէ ինչու Սաղիանում պտղատու ծառ չը կայ՝ խնձորենի, տանձենի և այլն։ «Որովհետև մեզանում երեխաները փչացնում են»—պատասխանում է դիմացինդ։

Զարմանալի է. միթէ մի հայր չէ կարող իր որդուն խրատել, որ չէ կարելի ուրիշի այգուն կամ պարտէզին ձեռք տալ, վնասել։

Կ. Աղասարեան

Սաղիան, 13 յուլիսի

ԹՈՔԱԽՏԱՒՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԽԱՆՔԵՆԴՈՒՄ

Խանքենդ (Շուշու գ.), 15 յուլիսի

Խօսելով հիւանդների դրութեան մասին, աւելորդ չեմ համարում ասել մի քանի խօսք Խանքենդի բնութեան և կեանքի վերաբերեալ։

Խանքենդը շրջապատված է բարձր սարերով ամեն կողմից, այնպէս որ այստեղ ուժեղ քամիներ չեն լինում. իսկ եթէ պատահում է՝ ոչ յաճախ, այն էլ անձրևների ժամանակ։ Օդը բաւականին տաք է (հասնում է 40° C.) և շատ մաքուր. փոշի էլ չը կայ, որովհետև փողոցները և բակերը զարդարված են կանաչներով, ակացիաներով ու լորենիներով։ Հասարակութիւնը խմում է աղբիւրի ջուր (բերված՝ մօտիկ սարերից) մի աւազանից, որ գտնվում է Խանքենդի կենտրոնում, չը հաշւելով ի հարկէ շրջակայքի աղբիւրները, որոնք աւելի հեռու են գտնվում։ Տներն այնքան գովելի չեն և իրանց ցածրութեամբ ու փոքրութեամբ նմանվում են հաւերի բների, այնպէս որ այստեղ բացակայում է ազատ և մաքուր օդը. իսկ ցուրտ եղանակներին էլ ժամերով վառարաններ վառվում են, բայց սենեակները չեն տաքանում։ Կեանքն էլ էժան չէ կարելի համարել. հացի փութը արժէ առաջին տեսակինը 5 կոպ., երկրորդ տեսակինը 4 կ., ոչխարի մսի փութը 15 կոպ., իսկ տաւարինը 13 կոպ. (առաջ աւելի թանգ էր). ձուն 10 հատը արժէ 20—25 կոպ., կաթի փութը 6 կ. և այլն և այլն...

Ամառանոցաւորների թիւն էլ շատ քիչ է, իսկ հիւանդներինը հասնում է 6 հոգուց ոչ աւելի։ Ինչպէս որ տների մասին վերև յիշեցի, հիւանդները տներում նստելով չեն կարող բժշկութիւն ձեռք բերել, իսկ զբօսնելու համար կայ միմիայն մի բուլվար, որը գտնվում է Խանքենդի բնակիչների և զինուորական զօրանոցների սահմանում։ Բուլվարը առանց ցանկապատի է, որը ծառայում է սագերի, հնդկահաւերի և հորթերի արածելուն. ծառերը շատ մեծ են և բարձր. կան մի քանի նստարաններ և 3 հատ էլ էլեկտրաշարժ կառքեր, բայց զբօսնողների թիւը այնքան քիչ է, որ նըստարանները միշտ դատարկ են լինում։ Յունիս ամսվայ սկիզբներում, քանի որ նոր էի եկել Սուխումից, անծանօթ լինելով հիւանդների հետ, մենակ էի զբօսնում. ամեն անգամ բուլվարում զբօսնելիս՝ օֆիցերների կանայք և երեխաները ետևիցս «չէխոտօչնի» էին կանչում. ծանօթանալով հիւանդների հետ՝ լսեցի, որ նոյն բանը նրանց վերաբերմամբ էլ ասելիս են եղել, և որ բուլվարի մուտքը արգելվում է նրանց։

Բաքուի բժիշկները անմիջապէս խորհուրդ են տալիս Թոքերի տուբերկուլօզ ունեցողներին գալ Խանքենդ, աչքի առաջ չունենալով ի հարկէ խոշընդոտ պայմանները։ Աւելորդ չեմ համարում ասել մի քանի խօսք Սուխումի բնակիչների մասին։

Ես այս ամբողջ ձմեռ և գարնան Սուխումում էի. ամեն մի քայլափոխում պատահում էինք հիւանդների։ Զբօսանքի տեղերը անշուշտ շատ էին, չը հաշւելով, ի հարկէ, սանատօրիաների այգիները և պարտէզները, որոնք առանձնապէս հիւանդների համար են պատրաստված։ Ամեն տեղ կը տեսնէիր հիւանդների խմբեր զբօսնելիս, և ոչ մի արգելք. ինչ վերաբերում է բնակիչների և պարտիզպանների վերաբերմունքին հիւանդների հետ, նկարագրել անգամ անկարող եմ, թէ ինչպէս սիրով ծաղիկներ կտրում և նուիրում էին հիւանդներին։

Հ. Աղաբաբեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ՊԷՏՔ Է ԹՈՂՆԵԼ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Դ.*)

Ես յօդուածիս Ա. մասում գրել էի, որ սրբազան Օրմանեանը իբրև հայ հոգևորականին «զուրկ է կայուն, բարձր դաւանանքից, սկզբունքներից և ոգուց»։ Այժմ էլ աւելացնում եմ, որ նրա վարչական հաւատամքը՝ «բաժանեա զի տիրեսցես»-ն է։

Եւ այս շատ ցայտուն կերպով երևում է սրբազանի գործառնութեան եղանակից «Սաղիմական» ասված այն խնդրի նկատմամբ, որ գնալով աճեց, մեծացաւ, բորբոքվեց և որն այսօր Կ. Պոլսի մեր վարչական աշխարհի համար մի փորձանք է դարձած, մի մեծ չարիք է դարձած։

Յոյս մեծ ունեմ, որ իմ ուշադիր, անաչառ և ողջախոհ ընթերցողները պիտի կարողանան ճանաչել սրբազան Օրմանեանին իր ձեռքով գրած, ստորագրած թղթերից, իր ոճերից, իր դարձուածքներից, իր լեզուից...

1903 թ. մարտի սկիզբներում ստացվում է Կ. Պոլսում Օրմանեանի անունով Երուսաղէմի միաբանութեան բողոքող անդամների թուղթը, որին իբրև պատասխան սրբազան Օրմանեանը (մարտի 25-ին, № 1024) ուղղում է յետագայ պաշտօնագիրը Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Ներսէս արքեպիսկոպոսի անունով։

«Գերապատիւ սրբազան եղբայր։ Այս օրերս գրութիւն մը հասաւ մեզ ս. Յակոբայ միաբանութեան 8 վարդապետաց, 3 աբեղայից և 2 սարկաւագաց ստորագրութիւնները և մարտ 1 թուականը կրող, որով այդ միաբանները կուզեն միաբանութեան գործոց և վերջերը տեղի ունեցած անկարգութեանց մասին բացատրութիւններ տալ։ Գրութիւնը ազգային վարչութեան խառն ժողովոյ մէջ ալ կարդացուեցաւ և ժողովը հարկ սեպեց իր տեսութիւնները յայտնել այդ միաբանից, ու այդ նպատակաւ ներկայս կուղղեմ ձեր գերապատիւ սրբազնութեան**), որպէսզի հաճիք իբր պատրիարքական փոխանորդ, հետեւեալները հաղորդել ստորագրողներուն, որք են (13 ստորագրողներու անուն և ազգանունները)։

«(1) Նախ և առաջ ժողովը նկատեց, թէ այս 13-ները, որք միաբանութեան երիցագոյն անդամներն ալ չեն, կարի յանդուգն լեզուով եւ անձնապաստան ոճով կը դատափետեն միաբանութեան գործերը... Հետեւապէս երբ յայտնի փոքրամասնութիւն մը կը սկսի յանդուգն լեզու գործածել և պատշաճից հակառակ բացատրութիւններու մէջ մտնել, շատ աննպաստ գաղափար կուտայ իր վրայ և լոկ կիրքէ մղուած ըլլալը կը յայտարարէ եւ կը վկայէ։

«(2) Նոյն 13 ստորագրողները վերջին եղելութեանց տեղեկագրութիւնը կազմած ատեննին՝ անկեղծութեան և ճշմարտախօսութեան պայմաններուն չեն համակերպիր, երբ բոլորովին զանց կընեն յառաջ բերել այնպիսի դիպուածներ, յորս իրենք գործիչ եղած են, նենգութեան նպատակ կը յայտնին պատրիարքարանէս ուզելով ծածկել իբրաց ստուգութիւնը, երբ անոր հեղինակութեան կը դիմեն իրենց գանգատներու մասին և քիչ մըն ալ կարճմտութեան փորձ կուտան, ենթադրելով թէ այնպիսի աղմկալից և հրապարակային արարքներ չկարենան պատրիարքարանի հաղորդուիլ ուրիշներու և նոյն իսկ օտարներու և պետական պաշտօնեաներու կողմէ։ Այդ տեսութիւնը շատ ծանր կշիռք ունեցած է ազգ. վարչութեան վրայ և շատ աննպաստ նկատուած է բողոքողներու անձնականին համար։

«(3) Ամենապատիւ Յարութիւն սրբազան պատրիարքի հրաժարականը պատմած ատեննին՝ կը պնդեն շաբաթի և կիրակիի դէպքերուն վրայ և անոնց իբր անմիջական հետեւանք կը յայտնեն հրաժարականի հեռագիրը. մինչ հեռագիրը տրուած է չորեքշաբթի օր և պատրիարքարանի թատր եղած անորակելի արարքներէն ետքը, որոց մասին խոր լռութիւն պահուած է 13-ներու գրութեան մէջ։ Պատմութեան այդ ծամածռութիւնը բաւական է ցուցնել, թէ հրաժարականը հետեւանք է ոչ թէ աշակերտաց բռնած ընթացքին շաբաթ և կիրակի օրերուն մէջ..., այլ հետեւանք է ձայնատէր միաբաններու կողմանէ նոյն չորեքշաբթի օր բռնուած ընթացքին, որք նոյն իսկ պատրիարքարանի յարկին մէջ պատրիարքի ներկայութենէն չպատկառելով՝ պատրիարքէ իշխանութեան և գործառնութեան կը միջամտեն և իբր պատրիարք հրամաններ արձակելու և կամքերնուն կատարման բռնանալու անլուր յանդգնութիւնը կը գործեն։ Այդ պատճառով բուն եղելութիւնը և անոր իմաստը խարդախել ուզողներուն խօսքը չէ կրցած ազգ. վարչութեան վրայ լաւ տպաւորութիւն ներգործել։

«(4) Ոչ նուազ հակասութեան մէջ կիյնան 13-ները և գաղտնի կիրքերէ մղուած ըլլալնին կը յայտնեն, երբ բոլոր ըրած պատմութիւննին և եղելութեան մանրամասնութիւնները եկեղեցւոյ և վարժարանի, աշակերտաց և անոնց տեսչին շուրջը բարձած ատեն՝ յանկարծ անձեր եւ դերեր շրջելով՝ Սահակ կաթողիկոսի և Ղևոնդ վարդապետի անունները կուտան, ինչպէս որ իրենց հեռագրին մէջ ալ ըրած էին, և աշակերտներուն և տեսչին վրայ գրածնին մոռնալով, այդ երկուքը իբր շարժէջ և յուղիչ կամբաստանեն։ Եթէ երբէք այդ երկուքին հնար ըլլար ներքին համամտութեան կամ գաղտնի դրդման ամբաստանութիւն բանել, պէտք էր որ այդ կէտը քննութիւն յառաջ բերէր, և իրենք չէին կրնար քննիչի և դատաւորի դերը կամ թէ կերպով մը խորհրդոց սրտագէտի ձիրքը ստանձնել և ասով իրենց գործոց և խօսից մէջ ուղղամտութեան բացակայութիւնը ապացուցանել. կէտ մը զոր մեծ ցաւով նշմարեց ազգ. վարչութիւնը և դժբաղդաբար չկրցաւ նպաստաւոր դատաստան կազմել 13-ներու վրայ։

«(5) Շատ աւելի մեծ ցաւով տեսաւ ազգ. վարչութիւնը՝ նոյն իսկ իրեն դէմ եղած անարգանքը։ Ամենապատիւ տէր-Սահակ սրբազան Խապայեան, Կիլիկիոյ աթոռոյն կաթողիկոս ընտրուած, ի կեդրոնէ վաւերացուած, կառավարութենէ հաստատուած, կայսերական հրովարտակով ճանչցուած, մեծ շքանշանով պատուած, տեղը մեկնելու պատրաստուած և հրաւիրակներն ալ հասած ըլլալով, չէր կրնար այլ ևս իբր միաբանութեանդ պարզ անդամը նկատուիլ, և անոր մասին կատարուած գործողութիւնք ազգ. վարչութենէն բխած ըլլալով, ինքն այլ ևս ազգ. վարչութեան և կայսերական պետութեան պատուած անձն էր և կերպով մը աւելի կեդրոնին, քան միաբանութեանդ պատկանած անձ մը, և հնար չէր, որ այլ ևս միաբանական ներքին կիրքերու խաղալիք դառնար, և ամենէն տարրական մըտածմունքն ալ պէտք էր իմացնել, թէ Սահակ սրբազան ամբաստանել, անարգել ու նախատել՝ ուղղակի ազգ. կեդր. վարչութիւնը ամբաստանել, անարգել եւ նախատել էր եւ նոյն իսկ պետական կարգադրութեան հակառակիլ։

«Արդ՝ասոնց այդ ամենուն միտք դարձնելու ոչ միայն անտեղի յիշերանքներով և անկապակից խօսքերով, ինչպէս վերը բացատրուեցաւ, նամակին մէջ Սահակ սրբազանն ամբաստանելնին, այլ և հեռագրով ի լուր ամենեցուն նախատելնին այնպիսի յանդգնութիւն մըն էր, որուն նկատմամբ չի կրնար ազգ. վարչութիւնը իր վճիռը չը յայտնել և իրեն ուղղած արհամարհանքը առանց դիտողութեան թողուլ և չիմանար, թէ ինչ նպատակով 13-ները ուզած են ազգ. վարչութեան դիմել, մինչ այդպէս կը նախատեն զայն, և ինչ ակնկալութեամբ կը սպասեն, որ վարչութիւնը կարենայ ծանրակշռութիւն տալ իրենց այսպէս անտեղի եւ անուղիղ եւ անպատշաճ ընթացքին։

---

*) Տես «Մշակ» № 129.

**) Փոխանորդս այս բացարձակ Ղևոնդ վարդապետի կողմնակից էր։

6) Հարկաւ իրենց այդ մասին անվայել եւ անիրաւ ընթացքն զգալով է, որ 13-ները, յանկարծ վերջին դիպուածներուն խնդիրը թողլով, եօթը տարիէ ի վեր մնացած հաշիւներու խնդիրը յառաջ կը բերեն։ Այդ սատումը որչափ և խնդրոյ նիւթ եղող դիպուածներուն հետ կապ չունի, և խնդիրն ուրիշ գետնի վրայ տանելու յայտնի մտադրութիւնը ցուցնէ, ազգ. վարչութիւնը չուզեց բոլորովին լռութեամբ անցնիլ և այդ մասին ալ իր կարծիքը չյայտնել։ Միաբանութեան պետը եւ պատասխանատու գլուխը պատրիարքն է եւ ինչ որ ներքին գործոց կարգադրութեան կը պատկանի, անոր պէտք է ուղղուի եւ անոր կարգադրութեան ենթարկուի։ Եթէ միաբանութիւնը կը կարծէ, որ այդ մասին իրաւունք մը ունի, կրնայ իր ստուար մեծամասնութեամբ ու օրինաց սահմանին ու պատշաճից պայմանի ներքև իր խնդիրն առաջարկել։ Խնդրարկուք կը յիշատակեն ժողովներու մէջ այդ բանի խօսուած ու խոստում եղած լինելը։ Բայց այդու ուղղակի սրբազան պատրիարքը ամբաստանած կը լինին, իբր կանոնազանց և խոստմնազանց, իսկ եթէ կը փափագին իմացնել, թէ ուրիշներ սրբազան պատրիարքի կամաց հակառակ իրեն գործել կուտան, սոյն ատեն ալ զինքն իբր ապիկար և անյարմար ամբաստանած կը լինին, և երկու ամբաստանութիւններն ալ չեն յարմարիր այն բացատրութեանց, զորս կը շռայլեն սրբ. պատրիարքի վրայ, և չի յարմարիր այն նախանձախնդրութեան, զոր ցոյց կուտան պատրիարքական հրամաններուն կատարմանց և պատրիարքական պատւոյն պաշտպանութեան համար։ Ասով աւելի եւս կը յայտնեն, թէ ուղղամտութենէ հեռու են, խօսած գովեստնին արուեստակեալ շողոքորթութիւն և ցուցուցած նախանձայուզութիւննին սուտ և կեղծիք են. ապա թէ ոչ չպիտի յանդգնէին այդպիսի տարօրինակ կերպով հաշիւներու խնդիրը մէջ տեղ նետել և վերջին եղելութեանց բուն կերպարանքը այլայլելու ջանալ։

«7) Հաշիւներու խնդրոյն մէջ առանձին կերպով մեղադրանքներ կը գրեն ելևմտից տեսչութեան և Ղևոնդ վարդապետի անձին դէմ։ Ազգային վարչութիւնը չէ այդ պաշտօնին ընտրութիւնը կատարողը, և զարմանալի կը թուի, թէ ինչպէս եօթն տարիէ հետէ զեղծումներ ընող, պարտքեր աւելցնող, հողերը վաճառող, վանքը կործանման տանող և ամեն անհաւատարմութեան տէր եղող անձ մը, ասկէ հազիւ 1½ տարի առաջ, նոր ընտրութեան մէջ միաբանութեան լիագոյն քուէներով նորէն իր պաշտօնին մէջ կը հաստատուի, իսկ եթէ միաբանական ընդհանուր ժողովէն յայտնուած վստահութիւնը այժմ փոքրամասնութեան կողմանէ կուզուի պլացուիլ, ազգ. վարչութիւնը կը պարտաւորի եզրակացնել, թէ անհաւատարմութիւններ եւ զեղծումներ իրական չեն, այլ պարզապէս վիրաւորեալ զգացումներու կամ անձնական կիրքերու անյարիր եւ անհիմն արտայայտութիւններ են, մանաւանդ որ խնդրոյն բնութենէն օտար եւ պարագաներէն անկախ առիթով ի լոյս կուգան, և եկեղեցիի ու շարականի, դասապետի ու աշակերտի միջադէպով կազմուած խնդիր մը՝ ել ու մուտքի և հաշուի խնդիրներուն սանդուղ յարմարցուիլ կուզուի։

«8) Ազգ. վարչութիւնը, որ տեղեակ է ս. Յակոբեանց միաբանութեան ներքին կանոնագրին, գիտէ, թէ ինչ ինչ իրաւունքներ ալ կը պատկանին միաբանութեան, միաբանական ժողովներուն՝ ըստ կարգի և կանոնի։ Սակայն այս իրաւունքներուն անհրաժեշտ պայմաններն են՝ օրինաւորութեան ձևերը, ուղղութեան նպատակները, պատշաճից կանոնները և պարագայից պահանջները։ Մի մեծ պայման է եւս մեծամասնութեան տեսութիւնը, և փոքրամասնութեան ներեալ չէ անվայել ձևի տակ իրաւունք պահանջել։ Ազգ. վարչութիւնը երբ կը տեսնէ, որ կրտսերագոյնից փոքրամասնութիւն մը այնչափ կիրքերէ յուզեալ եւ կուրացեալ է, որ չիտեսներ ուխտաւորութեան օրերուն պէտք եղած զգուշութիւնները, չիմանար միաբանական պատւոյն պահանջները, չի կասիր սրբավայրին ազդած պատկառանքին առջև, չի յարգեր պատկառելի պատրիարքի մը յարկին փափկութիւնը, չիմանար ազգային պատւոյն անհրաժեշտ հանգամանքները, չի զգար ազգային կենսական ընտրութեան մը նշանակութիւնը, չի խղճար օտարաց ծիծաղելի դարձնել միաբանութեան և եկեղեցւոյն նուիրական պատիւը, ինչպէս կարենայ հաւատալ, թէ ուղղութեամբ և անկեղծութեամբ վանքին ու միաբանութեան շահերուն պաշտպանութիւն կընէ նա։ Ո՞չ ապաքէն ամենէն աւելի հաստատուն և օրինաւոր իրաւունքներն իսկ կը կորսնցնեն իրենց ազդեցութիւնը, երբ ապօրինի եւ անվայել հանգամանքներու ներքեւ կիրառուին։

«Ահա այն կէտերը, զորս յանուն ազգային կեդր. վարչութեան կը յանձնարարեմք ձեր ս. եղբայրութեան հաղորդել այն 13-ներուն, որք մեզի ուղղուած նամակը ստորագրած են»...

Մ. աւ.-ք. Մելեան

(Կը շարունակուի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը 150 րուբլով ձեռք բերեց Թիֆլիսի այն յատակագիծը, որը կազմված է 1840 թւին և որը գտնվեց Թիֆլիսեցիներից մէկի թղթերում։ Նաև գնվեց Թիֆլիսի նկարագրութիւնը, որ վերաբերում է 1819 թւին։

◆ Յուլիսի 15-ին փակվեցին Կովկասեան շերամապահական կայարանին կից ամեն տարի բացվող՝ շերամապահութեան դասընթացքները։ Յուլիսի 16-ին և 18-ին ցանկացողները քննութեան ենթարկվեցին։

◆ Զանազան տեղերից մեզ հաղորդում են, որ ամսիս 18-ին և 19-ին թէ Կուրի, թէ Արաքսի աւազաններում և թէ լեռնային շրջաններում եղել է օդը տօթ և խեղդուկ։ Չը նայելով այն հանգամանքին, որ երկինքը յաճախ ծածկվել է ամպերով, բայց անձրև տեղացել է մի երկու տեղում, այն էլ աննշան քանակով։ Վերջին օրերի տօթից և քամիներից երաշտի են ենթարկվել բոյսերը և նրանց թւում բամբակը։

◆ Մեզ հաղորդում են, որ Մանթաշեանի կալուածքում ստացվել է շոգեշարժ գութան, որով պէտք է մշակվեն հողերը առաջիկայ շաբաթներում։

◆ Թիֆլիսի քաղաքագլուխը դիմեց ոստիկանապետին, որպէսզի դռնապանները պահակատեղիներում չը կանգնեցվեն այլ ևս առ. 4—6 ժամը, որպիսի ժամանակի ընթացքում հնարաւորութիւն կունենան մաքրելու քաղաքի փողոցները, կանխապէս ջուր սրսկելով փողոցների վրա։

◆ Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկերութիւնը մի յայտարարութիւն է ստացել Բագւից քաղաքագլուխ Ռաեվսկիի և ձայնաւոր Թաղիեվի ու մի քանի բժիշկների ստորագրութեամբ, որով ցանկութիւն է յայտնվում Բագւում բանալ յիշեալ Ընկերութեան ճիւղ։

◆ Յուլիսի 18-ին, Մոսկվայից Թիֆլիս ժամանեցին մի խումբ ճանապարհորդներ, թւով 80 հոգի, որոնք Մոսկվայի ուսուցիչ-ուսուցչուհիներից են։

◆ Յուլիսի 18-ին առաւօտեան ժամը 7-ին, Մուշտայիդ այգում, Կուրի ափին ատրճանակով ինքնասպանութիւն գործեց գրագիր Պաւել Կալաշնիկովը։

◆ Յուլիսի 16-ին, երեկոյեան ժամը 6½-ին, Սև քաղաքում «Արամազդ» ագիւսի գործարանից գնում էր Նիժեգորոդեան Արտելի արտելշչիկ Անտոն Մինովը, ունենալով գրպանում 470 րուբլի. գործարանից ոչ շատ հեռու նրա վրա յարձակվեցին հինգ չարագործներ, որոնք նրան գետին ձգելով և ատրճանակներով սպառնալով, խլեցին 470 րուբլին և, սպառնալով որ ձայն չը հանի, իրանք թագնվեցին, նախապէս ատրճանակից կրակելով և վիրաւորելով նրան ոտքի կակուղ մասից։

◆ Արտասահմանից Թիֆլիս վերադարձաւ տրամվայի դիրեկտոր ինժեներ Բէլօյը։

◆ Յուլիսի 13-ին, Շուշում տեղի է ունեցել օպերային երգիչ Ա. Կոստանեանի համերգը։ Իւրաքանչիւր երգից յետոյ երգիչը, ժողովրդի խնդրանօք, կրկնել է երգածները սիրալիր կերպով։ Ժողովուրդը շատ գոհ է մնացել երգչի պատճառած էսթետիկական բաւականութիւնից։ Ա. Կոստանեանը այս օրերս կը թողնէ Շուշին։

◆ Մեղրիից մեզ գրում են. «Յուլիսի 13-ին Մեղրիի բոլոր բանտարկվածները ազատվեցին բանտից՝ չորս հոգի երեք-երեք հարիւր րուբլի գրաւականով, միւսները մի-մի հարիւր։ Դատախազը, գործին ծանօթանալով, պատժական 102-դ յօդւածը փոխել է 124-դ, սակայն յոյս կայ, որ նրանք կը ճանաչվեն իբրև ներքին չարիքի դէմ մաքառողներ և ոչ քաղաքական յանցաւորներ, որովհետև այդ է եղել նրանց միակ նպատակը»։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Օզուրգէթում այս օրերս բացվել է գիւղատնտեսական բանկ։

◆ Յուլիսի 18-ին կայացաւ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. խորհրդի նիստը։ Հերթական հարցն էր հանգուցեալ բանաստեղծ Իլիա Ճաւճաւաձէի գերեզմանի վրա արձան-մատուռ կանգնեցնելու խնդիրը։ Պարզվեց, որ խորհուրդը այդ նպատակով առ այժմ ստացել է 1,555 ր., որին գումարելով Թիֆլիսի նահանգի ազնուականութեան խոստացած 2,500 րուբլին, կանէ 5,055 րուբլի։

Չը նայած որ այդ գործի համար անհրաժեշտ է 6,000 րուբլի, այնուամենայնիւ խորհուրդը վճռեց ձեռնամուխ լինել կառուցմանը, քանի որ սպասվում են նորանոր նուիրատւութիւններ զանազան անձերից և հիմնարկութիւնից, և անպայման մատուռ-արձանի կանգնեցումը աւարտել օգոստոսի 30-ին (ն. տ.), այսինքն Ի. Ճաւճաւաձէի մահվան տարելիցին։

◆ Թիֆլիս նահանգի ազնուականութեան պարագլուխների և պատգամաւորների ժողովը դիմեց Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան վարչութեանը, խնդրելով հաղորդել, թէ ինչ ձևով աւելի նպատակայարմար է շահագործել հանգուցեալ տ. Նգաձէի՝ ազնուականութեանը նուիրած հողաբաժինը, որ գտնվում է Գօրու գաւառի Ջեմօ-Ճալա գիւղում։ Ընդ սմին խնդրվում է հաղորդել, թէ որպիսի գումար կը հարկաւորվի ազնուականութեան գիւղատնտեսական կարիքները հոգալու համար, համաձայն նուիրատուի ցանկութեան։

◆ Լոնդոնում կազմվել է մի յատուկ կոմիտէ անգլիացիներից բաղկացած, որը նպատակ ունի ուսումնասիրել Վրաստանը, նրա պատմութիւնը, գրականութիւնը և ներկայի նրա տնտեսական և քաղաքական կացութիւնը։ Կոմիտէն կը կազմակերպէ համախորհուրդներ, դասախօսութիւններ և ընթերցանութիւններ՝ Վրաստանին նուիրված։

◆ Այս օրերս Փշաւ-Խէվսուրէթիա և լեռնային Թուշէթիա է մեկնում մի էքսկուրսիա, որի նպատակն է ուսումնասիրել և հաւաքագրել ժողովրդի բնոյթն ու սովորոյթները և երգն ու բանաստեղծութիւնները։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 12 յուլիսի

Թիֆլիսից եկած մի ընկեր ուսուցիչ այստեղ պատմեց ինձ, որ «Нов. Время»-ում հրատակված այն յօդուածները, որոնցով կարևոր է համարվում կաթողիկոսական աթոռը Էջմիածնից Պետերբուրգ փոխադրել, Թիֆլիսում վերագրում են իմ գրչին, թէև, ճշմարիտն ասած, չը գիտեմ ինչով եմ առիթ տուել այդ անմիտ ենթադրութեանը։

Հաճեցէք, խնդրում եմ, տեղ տալ «Մշակում» իմ այս յայտարարութեանս, որ ես երբէք յիշեալ ռուս թերթի մէջ նման բովանդակութեամբ յօդուածներ զետեղած չունեմ և որ ես ամբողջ հոգով դէմ եմ հայրապետական աթոռը Պետերբուրգ փոխադրելու մտքին։

Ն. Միրզաչիր

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսի հրդեհի հետևանքով քաղաքում տիրում է յուզմունք, մանաւանդ որ շարունակվում են հրդեհի դէպքերը։ Ամեն կողմից ստացվում են ցաւակցութիւններ և նուէրներ, յօգուտ վնասվածների։

◆ Երիտասարդ-Թիւրքերի կառավարութիւնը երկիւղ կրելով նորանոր մերկացումներից, շտապել է զինւորական դատարանին յանձնել Զէքի բէյի սպանիչներին։

◆ Չը նայած, որ Բ. Դուռը յայտարարում է մալիսօրների պահանջների մերժման մասին, բայց վերջին դէպքերը հարկադրեցին Թիւրքաց կաբինէտին նորանոր զիջումներ անել մալիսօրներին։ Անուղղակի կերպով բաւարարութիւն կը տրվի Չէռնօգօրիայի և մալիսօրների այն պահանջին, որ վերաբերում է մեծ պետութիւնների երաշխաւորութեանը։ Սրանից զատ Նիկոլայ արքայի ձայնի իրաւունք կը տրվի ալբանական հարցի վճռման ժամանակ։

◆ Եապօնական գեներալ Նօգին գտնվում է Սօֆիայում կիսագաղտնի կերպով։ Մտադրութիւն կար նրան պաշտօնապէս ընդունել, բայց այդ տեղի չունեցաւ ի յարգանս Ռուսաստանի։

◆ Չինական օֆիցէրներ պատրաստող դպրոցի համար հրաւիրվում են գերմանացի օֆիցէր-ուսուցիչներ։

◆ Նէօպոլիտանական (Իտալիա) շրջանում տեղի են ունեցել անկարգութիւններ, որի պատճառը կրօնական թափօրների արգելումն է։ Ցուցարարները քարեր են նետել կարաբինէր—ոստիկանների վրա։

◆ Թէհրանում ոչ մի տեղեկութիւն չէ ստացվում նախկին շահի առաջխաղացութեան մասին։ Կարծում են, որ երկու շաբաթից յետոյ դրութիւնը կը պարզվի։

◆ Պարսկաստանի այլ և այլ վայրերի անջումանները հեռագրական բողոքներ են տեղում Թէհրան Մահմէդ-Ալիի և նրան նպաստող օտարերկրեայ դիւանագիտութեան դէմ։

◆ Թէհրանում միտք է յղացել Եւրոպա ուղարկելու մի առանձին առաքելութիւն, որը պիտի պաշտպանէ պետութիւնների առաջ Պարսկաստանի անկախութիւնը։ Թերևս նա դիմէ այսպիսի խնդրով Հաագայի տրիբունալին։

◆ Պարսկական նոր կաբինէտը այլ և այլ կուսակցութիւնների հռետորների ճառերի մէջ յորջորջվում է, որպէս «ազատութեան և անկախութեան կաբինէտ»։ Դեմոկրատների պարագլուխը պատգամաւորներին յիշեցրեց ֆրանսիական յեղափոխութեան և գիլիօտինի մասին։

◆ «Vossiche Zeitung»-ը մեղադրում է Անգլիային Մահմէդ-Ալիի մեղսակցութեան մէջ և ասում է, որ Անգլիան և Ռուսաստանը արդէն պայմանաւորվել են Պարսկաստանից գրաւումներ անելու գործի նկատմամբ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

19 յուլիսի

ՍԻՄԼԱ։ Հնդկաստանում սաստիկ երաշտ է։

ՌԻԳԱ։ Վէրօսի գաւառում կալանաւորվեց Պետերբուրգում Բրուշէվից 95,000 ր. յափշտակող անձը։

ՍԱՄԱՐԱ։ Նահանգական զէմստվային ժողովը անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեանը օգնելու համար պետութիւնից խնդրում է մի միլիօն րուբլի։

ԵԱՐՕՍԼԱՒԼ։ Բացվեց ագրօնոմների համագումարը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութեան տեղեկութիւնների համաձայն, 1911 թ. Վիէննայում կայանալիք հրէական գաղթային համագումարը յետաձգվում է 1912 թւին։

Ներքին գործերի մինիստրութիւնը սիբիրախտի դէմ կռւելու համար Ամուրեան շրջանը ուղարկեց 20 բժիշկների, յատկացրեց 25,000 րուբլի և վիրակապութեան նիւթեր։

ՇԱՐԼՕՏ։ Ուժեղ շոգերի պատճառով 152 գործարաններ դադարեցին աշխատելուց։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Արօսի դատարանը վճռեց պատասխանատւութեան ենթարկել նահանգապետի պաշտօնակատար Բրուֆէլդին։

ԼՕՁ։ Կէլբախ և Ալէքսանդրօվ փողոցներում հրդեհից յետոյ 180 ընտանիք մնաց անապաստան։ Կազմվեց մասնաժողով։

ՊՕԼՏԱՎԱ։ Զօլօտօնօշի գաւառում եղել է խօլերայի մի դէպք։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Համաճարակի սկզբից քաղաքում և գաւառներում խօլերայով հիւանդացել են 11, մեռել են 5 հոգի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՁԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՁԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—72

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Ներքին եւ երեխաների հիւանդութիւններ
Գօլօվինսկի, 18, ա. Դօբրժանսկիի, Արք. թատրոնի հանդէպ, տէլէֆօն № 901.
Հիւանդ. ընդունելութիւնը) 10—12 ժ.) 6—7 ժ.
(Ե.Հ.Կ.) 580. 100—2

Դր. Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ պրօֆ. Գօլդշտէյնի եւ Կլապ
Ընդունում է ամեն տեսակ հիւանդների
ուղեկցում է նրանց մասնագէտների մօտ
Հասցէն՝ Berlin, Charlottenburg. Leibnizst
29, տէլէֆօն 11581.
725. 3—3

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
կատարում է կաշուի տակ սրսկումներ, վէրքի փաթ թումն, ցեղերի քսումն, գնում է բանկաներ։ Բժշկ թիւն տղամարդի սեռական թուլութեան, անկ ռողութեան, սերմնահոսութեան եւ երազախ րի, հիմնաւոր բժշկութիւն տրիպէրի (սուսանակ), տալով հմուտ մասնագէտ բժիշկների։ Ստաբ բեայ հիւանդների մանրամասն խորհուրդներ և գրաւոր կերպով։ (Ուղարկել 3 րուբլի)։ Մասսաժ, լեքտրականութիւն, բժշկական մարմնամարզութիւն։ Ը դունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Ծախվում է կազմած «Տղամ. եւ կանանց գաղտնի հիւանդ բժշկարան» նկարներով և ռեցեպներով։ Գինը կօպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէն. Тифли
Семеновская ул. № 9.
(Կ. Հ.) 160. 50—39

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի հայ ԳԱՆՁԱՊԱՀՈՒՀԻ, որ համաձայն
արտասահման (Թիւրքիա) գնալ։
Պայմանների մասին կարելի է տեղեկա նալ՝ դիմելով Թիֆլիսում Խլէբնի պէկ, № 3, Պետրոս Հէքէքեանին։
729. 1—1

Գրաֆսկայա և Տրօյցկայա փողոցների ա կիւնում, № 10, վարձով են տրվում երկ
ԿՐՊԱԿՆԵՐ
դիմել Պեսկօվսկայա փող. 43. տնատիր բնակարան, վերին յարկ. մուտքը բակի
730. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՀԱՅ-ՌՈՒՍ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Պարունակում է աշխարհաբարի լիակատար բառամթերքը և ոճաբանութիւնը։ Ունի յ տուկ անունների բառարան։ Գինը 6 կազմած 6 ր. 50 կ., 6 ր. 75 կ. և 7 ր. Նոյն հեղինակի «Ռուս-Հայ բառարան», նը 8 ր., կազմած 9 ր.։
Դիմել հեղինակին՝ А. Дагбашяну, Еван ловская 8. Въ г. ТИФЛИСЪ.
ԻՆՁ ԴԻՄՈՂՆԵՐԻՆ ԻՄ ԳՐՔԵՐԻՑ 20% ԶԵՂ
Թիֆլիսի բաժանորդներին խնդրում եմ ձամբ ստանալ ինձնից բառարանիս V և պրակները (առաւ. ժամը 9—11-ը, երե ժ. 5—7-ը)։
(ա. օ.) 727. 2—

Լոյս տեսաւ
Ս. ԶԵՐԲԷՋԵԱՆԻ
Օրինաւոր գրպարտութեան ցանցերում
Գինն է 30 կոպ.
Դիմել «Հովիտ» խմբագրութեան և գր վաճառներին։ (ա.օ.) 717. 10—7

ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
(Իզմայլօվսկի պր., № 27)
Պարիզ 1900. ՈՍԿԷ ՄԵԴԱԼ Նիժնի-Նովգօր. 1896.
ХИМИЧЕСКАЯ С.ПЕТЕРБУРГСКАЯ ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ
ՔԻՆԱՅԻ ՊՈՄԱԴԱ
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ եւ ԹԵՓԻ ԴԷՄ
Ընտանեկան պօմադա։ Ֆիլօկօմ պօմադա։ Պօմադա-վազելին։
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ. 521. 8—3

ՄԵՐՎԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆ
հետևեալ դասերի համար

Ա. Թւաբանութիւն II, III և IV բաժանմունքներում	12 դաս
Հայոց լեզու I բաժանմունքում	6 դաս
Նկարչութիւն բոլոր ուսումնարանում	7 դաս
Բ. Հայոց լեզու II և III բաժանմունքներում	11 դաս
Իրագնութիւն բոլոր ուսումնարանում	4 դաս
Երգեցողութիւն բոլոր ուսումնարանում	8 դաս

Այս ուսուցիչը եկեղեցու համար միաձայն խումբ պիտի կազմէ և ինքն էլ խմ պետութիւն անէ ու աջող ձայն ունենայ։

Գ. Ռուսաց լեզու բոլոր ուսումնարանում—	16 դաս (յունվարից + 3 դաս)
Թւաբանութիւն I բաժանմունքում	5 դաս։

Այս ուսուցիչը ամեն օր կունենայ մարմնամարզութեան դասեր օրական 25
Նա պէտք է աւարտած լինի կամ ռուսաց ուսուցչական սեմինարիան, կամ Ալէքսա բեան ինստիտուտը։
Ուսուցիչներից իւրաքանչիւրն ստանալու է միմիայն ռոճիկ 700 րուբլի։
Ցանկացողները թող շտապեն իրանց խնդիրները և ուսման վկայականներն ուղ կել։ Առանց վկայականի խնդիրն անհետևանք կը մնայ։ Հոգաբարձութիւն
(ա. օ.) 728. 4—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.